Գենդերային բյուջետավորման ներդրման հնարավորությունների վերաբերյալ անցկացրած ֆոկուս խմբային քննարկումների վերլուծություն

Արմինե Մխիթարյան

Գենդերային բյուջեն ըստ սեռի և խոցելիության հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների քաղաքականության իրականացման համար ռեսուրսների տարանջատման համակարգ է, մի համակարգ, որը պետք է բաց լինի հասարակական փորձաքննության և քննարկումների համար:

Գենդերային բյուջեն սկզբունքորեն չի տարբերվում ներկայումս բյուջետային գործընթացում գործողից, այլ հանդես է գալիս որպես դրա յուրահատուկ տարատեսակ: Այն հնարավորություն է տալիս ավելի խորը պատկերացում կազմել, թե ինչն ես կառավարում, որոնք են ընդունվող որոշումների հետևանքները, ինչն է բարձրացնում դրանց արդյունավետությունը՝ կանանց և բնակչության խոցելի խմբերի վրա ազդեցության տեսանկյունից՝ հիմք ընդունելով փորձարկված սոցիալ-տնտեսական ընթացակարգերը:

Պետական բյուջեն փակ համակարգ է, որում ցանկացած որոշում կոնկրետ գերակայությունների, մեր պարագայում գենդերային գերակայությունների, օգտին վերաբաշխման համար պետք է ունենա համապատասխան կառուցվածք՝ ելնելով իշխանության առանձին մակարդակների միջև գործառույթների բաշխումից և, հետևաբար, բյուջեի երկու մակարդակներից:

Առաջին մակարդակը հանրապետական բյուջեն է, որի դրամական միջոցները նախատեսված են պետական և տարածքային կառավարման խնդիրների և գործառույթների ֆինանսավորման համար:

Երկրորդ մակարդակը համայնքային բյուջեներն են:

Այս մակարդակները միմյանց հետ կապված են սոցիալական տրանսֆերտներով:

Բյուջեի կառուցվածքում գենդերային բեռնվածության առանձնացումը ենթադրում է բյուջեի մեջ ներդնել նրա հոդվածների սոցիալական (գենդերային) դասակարգում:

Պետական (հետևաբար՝ նաև համայնքային) բյուջեն պատասխանատու չէ *առևտրային ոլորտում տնտեսապես ակտիվ բնակչության վիճակի, նրա եկամուտների, աշխատանքի պայմանների համար*:

Սակայն, ելնելով երկրի սահմանադրական երաշխիքների ապահովման սկզբունքից, այն պատասխանատու է *անաշխատունակների՝ երեխաների, տարեցների, հաշմանդամների և խոցելի այլ խմբերի համար*:

Գենդերային բյուջետավորման ձևավորումն ու իրականացումը թույլ է տալիս նոր սոցիալ-տնտեսական տեխնոլոգիաների միջոցով առավել խորը և ամբողջովին գնահատել ընդունված

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

որոշումների հետևանքները կանանց ու տղամարդկանց (ինչպես նաև խոցելի խմբերի) համար և արդյունքում բարձրացնել դրանց արդյունավետությունը:
Ուստի գենդերային բյուջետավորումը ենթադրում է *սոցիալական փորձաքննության, լայն հասարակական քննարկման և լոբինգի անցկացման հնարավորություն*:
Գենդերային բյուջետավորման կառուցումը չպետք է իրականացվի որևէ առանձին խմբի օգտին:

Բյուջետային գործընթացի մասնակիցներ կարող են լինել.

- Բոլոր մակարդակների իշխանության մարմինները
- Հասարակական կազմակերպությունները
- Փորձագիտական ընկերակցությունները
- ԶԼՄ-ները
- Տարբեր բնագավառների մասնագետները:

Բյուջետային գործընթացի բոլոր փուլերում՝ առաջարկությունների պորտֆելի ստեղծումից մինչև բյուջետային ծրագիր, դրա քննարկումներից մինչև իրականացման մոնիթորինգ, բյուջետային հաշվետվությունից մինչև հասարակության գնահատական, հրապարակում և ԶԼՄ-ներում ելույթներ, հնարավոր են համագործակցության հետևյալ ձևերը.

- համատեղ աշխատանքային խմբեր
- հանձնաժողովներ
- լսումներ
- սեմինարներ
- համաժողովներ:

Գենդերային բյուջեի կիրառման շրջանակը համայնքային մակարդակում՝ ռեսուրսների կանոնակարգումն է ըստ բնակչության կենսամակարդակի վրա ազդող հետևյալ բաժինների.

- անձնական եկամուտներ
- աշխատանք և զբաղվածություն
- կրթության, առողջապահության, մշակույթի ոլորտներ
- անաշխատունակների սոցիալական սպասարկում
- աղքատների սոցիալական աջակցություն
- կոմունալ-բնակարանային ապահովման քաղաքականություն
- հանրային տրանսպորտ
- հանրային ենթակառուցվածքներ:

Այլ կերպ ասած՝ **գենդերային բյուջեն** ընդգրկում է պետության/համայնքի և հասարակության փոխհարաբերությունների բոլոր այն ուղղությունները, որոնցում այս կամ այն չափով

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

մասնակցում են պետության/համայնքի միջոցները և որոնք կարող են տարբեր կերպ ազդել կանանց և տղամարդկանց (ինչպես նաև խոցելի խմբերի) սոցիալական վիճակի վրա:
Ընդհանրապես ՀՀ պետական բյուջեում ներկայացված ծրագրերը չեն ներառում սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում ռազմավարական հետազոտություններ: Այդ տեսանկյունից, օրինակ՝ պետական բյուջեի միջոցների բաշխման գենդերային վիճակագրության իրականացումը հնարավորություն կտա որոշել սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվող ծախսերի արդյունավետության մակարդակը: Ելնելով դրանից, բոլոր մակարդակների բյուջեների գենդերային փորձաքննության իրականացումը բյուջեի մշակման նախնական փուլում հնարավորություն կտա հայտնաբերել կանանց և տղամարդկանց (ինչպես նաև խոցելի խմբերի) սոցիալ-տնտեսական կարգավիճակի վրա բյուջետային միջոցների բաշխման ազդեցությունը:

Որպես համայնքային բյուջեի գենդերային փորձաքննության ցուցիչներ կարող են հանդիսանալ՝

1. Բյուջեում հաստատվող ուղղակի սոցիալական ցուցիչները

Ծառայությունների համար կատարվող ծախսերը հանդես են գալիս որպես ելակետային բազա գենդերային մոնիթորինգի և վերլուծության համար: Ըստ ճյուղային դասակարգման՝ առանձնացնում ենք սոցիալական ոլորտի ճյուղերի ծախսերը (կրթություն, առողջապահություն, սոցիալական աջակցություն, բնակարանային-կոմունալ տնտեսություն) որպես բնագավառ, որոնցում իրականացվող ծախսերը գերազանցապես կանանց և երեխաների օգտին են:

2. Բնակչության, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանության ցուցիչները՝ բյուջեի համալիր հոդվածների ծախսերի կազմում

- ❖ բյուջեից և այլ հիմնադրամներից կատարվող ծախսերը հանգստի կազմակերպման, սպորտի, առողջության պահպանման և այլնի համար (տեսակները, գումարները, թվաքանակը)
- ❖ նպաստներն ըստ կարիքավորության
- ❖ երեխաների համար սոցիալական հիմնարկությունների զարգացումը (նախադպրոցական, արտադպրոցական աշխատանք, ցերեկային խնամքի կենտրոններ)
- ❖ բյուջետային միջոցների հատկացումը տարեցների և հաշմանդամների համար, այդ թվում՝ հաշմանդամ երեխաների համար:

3. Հանրապետական և տարածքային ծրագրերը կանանց և երեխաների համար

- ❖ ծնողազուրկ երեխաների, հաշմանդամ երեխաների համար նախատեսված ծախսերը
- ❖ դպրոցներում համակարգչային ծրագրեր ներդնելու համար ծախսերը
- ❖ սոցիալական կողմնորոշում ունեցող ծրագրերը, օրինակ՝ բնակարանաշինությունը (միջոցառումներ, ընդգրկում, միջոցներ):

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

4. Ըստ սեռի և տարիքի տարբերակված սոցիալական ստանդարտները և դրանց ուղղված ֆինանսական միջոցները՝ ծառայություններ տրամադրող ճյուղերում (կրթություն, առողջապահություն, մշակույթ):

5. Միջավայրային ցուցիչները

- համայնքի կառուցվածքը
- հանրային տրանսպորտի պլանավորումը
- տրանսպորտի հասանելիությունը
- միջավայրի մատչելիությունը, հատկապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար
- խմելու և ոռոգման ջրի հասանելիությունը:

Բյուջետային ծրագրերի կազմման և կատարման արդյունքների ներկայացման ձևաչափը պետք է արտացոլի ոչ այնքան ծրագրային ծախսերի կառուցվածքն՝ ըստ դրանց տեսակների (աշխատանքի վարձատրություն, ապրանքների և ծառայությունների ձեռքբերում և այլն), որքան այդ ծրագրերի իրականացումից ակնկալվող արդյունքները երկու սեռերի (ինչպես նաև խոցելի խմբերի) համար հավասարապես:

Ելնելով վերը նշվածից, տվյալ **Ծրագրի** շրջանակներում իրականացվել է 10 խոշորացված համայնքների բյուջետային գործընթացների հետ կապված ուսումնասիրություն՝ պարզելու համար, թե որքանով են դրանք գենդերայնորեն զգայուն և ինչպես են առհասարակ ազդում համայնքի բնակչության վրա, հատկապես՝ խոցելի խմբերի ներկայացուցիչների կյանքի որակի և ներառականության վրա:
Ուսումնասիրության առաջին փուլի համար ընտրվել է ֆոկուս խմբային քննարկման մեթոդը: Գենդերային բյուջետավորման վերաբերյալ ֆոկուս խմբային քննարկումներ անցկացվել են հետևյալ 10 խոշորացված համայնքներում՝ ***Բերդ, Արենի, Գլաձոր, Կապան, Մեղրի, Գորիս, Շինուհայր, Տեղ, Միսիան, Գորիայք:***
Յուրաքանչյուր համայնքում անցկացվել է 1-ական ֆոկուս խումբ համայնքապետարանի աշխատակիցների ու ավագանու անդամների հետ և 1-ական ֆոկուս խումբ համայնքային ենթակայության կազմակերպությունների (ՀՈԱԿ-ների) ներկայացուցիչների և ակտիվ բնակչության հետ:
Ֆոկուս խմբերն անցկացվել են նախապես մշակված հարցաշարերով *(Հարցաշարերը կցվում են)*:
Ստորև ներկայացվում է ֆոկուս խմբային քննարկումների վերլուծությունը:

Համայնքապետարանի աշխատակիցների հետ քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ համայնքային բյուջեի կազմումն ու դրա ընդունման գործընթացն ունի որոշակի ստանդարտ ձևաչափ, որին համայնքապետը, ֆինանսական բաժնի աշխատակիցներն ու ավագանին հնարավորինս հետևում են:

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

Այսպես, բյուջեի կազմման գործընթացը սկսվում է օրինակելի ձևը ստանալուց հետո: Համայնքպետարանի ֆինբաժինը այն քննարկում է՝ հաշվի առնելով.

- ✓ նախորդ տարվա արդյունքները
- ✓ զարգացման ծրագրերում նախատեսված գործողությունները
- ✓ սեփական եկամուտների հնարավորությունները և ստացվող դոտացիաները
- ✓ բյուջեի կատարողականի ժամկետները:

Առանձին քննարկումներ են կազմակերպվում համայնքային ենթակայության կառույցների ներկայացուցիչների, ինչպես նաև բնակավայրերի վարչական ղեկավարների հետ, որպեսզի հաշվի առնվեն բոլոր բնակավայրերի խնդիրներն ու առաջնահերթությունները:

Առաջնահերթությունը հիմնականում տրվում է ընթացիկ և պարտադիր լիազորությունների մեջ մտնող ծախսերին՝

- ✓ աշխատակազմի/ապարատի պահպանման ծախսեր.
- ✓ մանկապարտեզների սնունդ, էլեկտրաէներգիա, կապ, աշխատավարձեր.
- ✓ այլ ՀՈԱԿ-ների (արվեստի, սպորտային դպրոցներ/կենտրոններ, մշակույթի տներ, գրադարաններ) հետ կապված ծախսեր.
- ✓ գյուղատնտեսություն.
- ✓ համայնքային լուսավորություն.
- ✓ աղբահանություն:

Ֆոկուս խմբային քննարկումներից՝

«Հիմնականում կազմվում ա, առաջնահերթություն տալով համայնքի բոլոր խնդիրներին՝ կա գյուղատնտեսություն, սոցիալական ոլորտ, աշխատավարձ, մանկապարտեզ, սնունդ, հերթական ամեն ինչ դրվմ ա, կազմվմ ա, ստացվում ա ինչ-որ մի հատ X թիվ, որը իրա մեջ պետք ա ներառի սեփական եկամուտներ և դոտացիոն թիվ, բնականաբար, ինքը ինչ-որ տեղ սեփական եկամուտների վրա հիմնված ա, որը ոչ էդքան իրատեսական ա, բայց, համենայնդեպս, կապված ա հավաքագրման հետ, նախատեսվում, կատարվում ա դրա հիման վրա»:

«Բյուջեն կազմում ա ֆինանսական բաժինը, ներկայացնում ա ավագանուն, ավագանին հաստատում ա»:

«Համայնքի ղեկավարը հաստատում ա, բյուջեն ներկայացվում ա ֆինանսների նախարարություն, մարզպետարան և սկսվում ա հետագա գործընթացը՝ տարեկան բյուջե, տարեկանը բաշխվում ա եռամսյակային, եռամսյակայինը ամսեկան, նախահաշվով նախատեսված ըստ հոդվածների»: «Մենք, ուրեմն, հաստիքացուցակը ներկայացնում ենք, ամենքս մեր համայնքում ինչ հաստիքներ ա պետք, ըստ այդմ, հետո ավագանում էլ դրվում ա քննարկման: Հաստատվում ա հաստիքները, հաստիքաչափերը»:

«Հիմնականում մեր մոտ տենց մեծ բյուջե էլ չկա, հիմնականում, ասենք, վարչական աշխատողներ, մանկապարտեզի և, ասենք, համայնքի ենթակայության հիմնարկներ,եթե որոշ

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

գումար մնում ա, ասենք, աղբահանություն, կոմունալ ծախսեր»:
*"Տենց մեծ բյուջե չունենք, ասենք, մենք, որ, ասենք, համայնքում դնենք կապիտալ շինարարություն, էդած բյուջեն էլ, ասենք, ներդրումների համար որոշակի գումար ա մնում, հետո առաջնակարգ տեխնիկական հիմնախնդիրներ ա լինում համայնքներում, էտեղից տրվում ա, ասենք, ներդրում": (**Բերդ**)*

*«Խոշորացումից հետո մենք մի անգամ ենք առիթ ունեցել բյուջե կազմելու: Քանի որ տեղի է ունեցել խոշորացում, 2018թ. բյուջեի ամբողջ գործընթացը կազմակերպվել էլ հանրային քննարկումների և վարչական ղեկավարների և ավագանիների մասնակցությամբ: Ես կասեի մոտավորապես 2 ամիս, նոյեմբերի 13-ից համայնքի ղեկավարը ստանձնել է պարտականությունները և նոյեմբերի 24-25-ից, համաձայն մարզպետարանի կողմից ներկայացված ժամանակացույցի, մենք սկսել ենք բյուջեի քննարկումները և այն բոլոր ծախսային ուղղություններն ու տարեկան աշխատանքային պլանները, որոնք պետք է կատարենք համայնքերում՝ հաշվի առնելով նաև համաֆինանսավորվող ծրագրերի առկայությունը: 2 ամիս մանրամասն քննարկվել է տարեկան աշխատանքային պլանը բոլոր ոլորտներով, մանկապարտեզների տնօրենների, արվեստի դպրոցի ներկայացուցիչների մասնակցությամբ և հաստատվել է ավագանու որոշմամբ: Բյուջեն հունվարի 19-ին ընդունվեց»: (**Արենի**)*

«Ես [համայնքի ղեկավարը] կնկարագրեմ: Ընդհանրապես, բյուջեն կազմելուց առաջ, հաշվի ենք առնում հաջորդ տարվա մեր ընթացիկ գործերը, աշխատանքները, հնարավորությունները և ֆինանսները, ինչպես նաև ժամկետայնությունը՝ ըստ իրականացման ամիսների, խնդիրների առաջնայնության և կարևորության: Չնայած դրան, որ ինչքան էլ փորձում ենք թիմով աշխատել և ճիշտ ձևավորել բյուջեն, որպեսզի վերջնական լինի, սակայն տարվա ընթացքում նոր խնդիրներ են առաջանում և ստիպված ենք լինում վերանայել բյուջեն և վերաբաշխում կատարել: Ընդհանուր առմամբ 80 տոկոսով վերջնական ենք կազմում, քանի որ կարողանում ենք ճիշտ պլանավորել, հասկանալ, փորձում ենք ստանալ այն իրականը, մոտիկը, ինչը որ ունենք հիմա»:
*"Բյուջեի կազմման և հաստատման գործընթացում ներգրավված են, հիմնականում, աշխատակազմի այն անդամները, ովքեր ուղղակի կապ ունեն, բայց ցանկացած լավ կարծիք, լավ առաջարկ մենք չենք խուսափում ընդունել: Իրականում, ովքեր կազմում են, բոլորն էլ իրենց մասով տեղյակ են լինում, քննարկում ենք, քվեարկում": (**Գլաձոր**)*

«Ուրեմն, բյուջեի կազմման և հաստատման գործընթացում, հիմնականում, մենք առաջնորդվում ենք բյուջետային համակարգի մասին օրենքով և տեղական ինքնակառավարման մասին օրենքով, այսինքն՝ մեզ հրաման ա տրվում, ստեղծվում ա հանձնաժողով և ենթակա կառույցներից մենք հավաքագրում ենք հայտեր, նախահաշիվներ, քննարկվում ա, մինչև դա ունենում ենք զարգացման ծրագիր հնգամյա և առաջնահերթության սկզբունքով ընտրվում է ծրագրերը: Ամբողջական փաթեթները ունենալուց հետո, այսինքն՝ ենթակա կառույցների պահանջները, ընդհանուր ծրագրերը, ինչ համայնքային ծրագիր պետք է

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

իրականացվի և պետբյուջեից հատկացվող գումարները, որոնք նպատակային կայացվի և ծրագրերը պետք է իրականացվի և դրա հիման վրա արդեն այդ ծախսային մասը դնում ենք մի կողմ ու սկսում ենք եկամտային մասը: Եկամտային մասը մենք գիտենք ձևավորվում ա շատ չնչին եկամուտներից, որը տարիներ ի վեր միշտ էլ հավաքագրվել ա վնասով: Եկամուտների հաշվարկներից հետո, տեղական տուրքերը ավագանու հաստատելուց հետո, տեղական վճարները, տեղական տուրքերը, գույքահարկը և հողի հարկը ուսումնասիրելով, հողերի վարձակալությունները, գույքի վարձակալությունները թարմացնելով և հաշվարկելով, եկամուտները հաշվարկելուց հետո, արդեն միշտ համայնքի բյուջեի նպատակները ավելի շատ ա, քան հնարավորությունները: Արդեն այստեղ մենք ստիպված ենք լինում այլընտրանքով առաջնորդվել, այսինքն՝ առաջնահերթությունը տալով ենթակա կառույցներին, հիմնականում, ընթացիկ ծախսերն ենք իրականցնում, ***աշխատավարձեր, մանկապարտեզների սնունդ, էլեկտրաէներգիա, կապ,*** *հետո արդեն, հնարավորության սահմաններում, լրացուցիչ ինչ որ բաներ ա իրականացվում: Բյուջետային համակարգի մասին օրենքով մեր բյուջեն ունի դասակարգում, ունի բաժին, դաս, խումբ: Մենք չենք կարող այդ խմբերից դուրս գալ, և ամեն մի կազմակերպություն, ամեն մի ծախս ունի իրա ուղղվածությունը և այդ ուղղվածությունից արդեն ծրագրեր է բացվում: Երբ արդեն նախագիծը և գումարների ուղղվածությունը պարզ ա լինում, հանրային քննարկման ենք ներկայացնում»: (****Կապան****)*

«Գործընթացը սկսում ենք օրինակելի ձևը ստանալուց հետո: Համայնքպետարանի ֆինբաժնում քննարկումներ են լինում, հաշվի են առնում նախորդ տարվա արդյունքները, զարգացման ծրագրերում նախատեսված գործողությունները: Առանձին քննարկումներ են կազմակերպվում համայնքային ենթակայության կառույցների ներկայացուցիչների, բնակավայրերի վարչական ղեկավարների հետ: Իրականացվում են համայնքային քննարկումներ: Տարածքում ակտիվ գործող միակ ՀԿ-ն ՄԿՌԿ-ն է, ներկայացուցիչները հրավիրվում են, չհրավիրեն էլ իրենք գալիս են”:
*“Բյուջեի նախնական տարբերակը քննարկվում է, առաջարկների դեպքում կատարվում են լրացումներ, ճշտումներ: Վերջնական տարբերակը ներկայացվում է ավագանու հաստատմանը: Եթե լինում են առաջարկներ, կատարվում են համապատասխան փոփոխություններ, նորից ներկայացվում է հաստատման»: (****Մեղրի****)*

«Նախ, կարիքներից ելնելով, վարչական ղեկավարները փաստաթղթեր են ներկայացնում տարվա ընթացքում պետք եղած ապրանքների, իրականացված աշխատանքների, խնդիրների, գաղափարների, որոնք ֆինանսական տեսանկյունից հնարավոր է դիտարկել, բյուջեում կարելի է ընդգրկել: Էդ ամենը հավաքագրվում է”:
“Բանավոր քննարկումներ են լինում, վարչական ղեկավարները իրենց բնակավայրերում քննարկում են խնդիրները, որոշում են, թե որոնք են առաջնահերթ, ներկայացնում են համայնքապետարան”:
*“Այդ բոլորը քննարկում ենք ավագանու հետ: Քննում ենք, թե այդ բոլոր խնդիրները ինչքանով է անհրաժեշտ և տեղավորվում բյուջեի մեջ, և բյուջեն կազմվում է: Կան նաև ապարատի պահպանման ծախսեր»: (****Շինուհայր****)*

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

*«Առաջին աշխատանքը հայտերի հավաքագրումն է, այսինքն՝ հաշվի ենք առնում ծախսային կարիքները, որ ոլորտի պատասխանատուները ներկայացնում են: Օրինակ, քաղաքաշինության բաժինն իր կողմից հաշվառվող բազաների, գույքահարկինն իր՝ գույքահարկի, հողի հարկի բազայի տվյալներն է հաղորդում, մշակութային միջոցառումների մասով՝ մշակույթի, սպորտի, երիտասարդության հարցերով բաժնի պետն է հավաքագրում տվյալները, ինչպես նաև կրթության ոլորտում արտադպրոցական կրթության և նախադպրոցական կրթության վերաբերյալ տեղեկատվություն: Եվ մնացած բաժինների կողմից ընդհանուր օգտագործվող շարունակական ծախսեր, էդպես ասեմ՝ ջեռուցում, ջրամատակարարում, աղբահանություն, կոմունալ, այլ ծառայությունների՝ կապ և այլն, դրա վերաբերյալ ծախսերն էլ, բնականաբար, մենք արդեն բաժնով գնումների պլանով նախատեսում ենք: Հաջորդ փուլը, երբ որ մենք արդեն ունենք մեր եկամուտների կոնկրետ չափը և պետական բյուջեից տրվող դոտացիայի չափը, բնականաբար էդ սահմաններում էլ որոշվում ա մեր ծախսերը: Առաջնահերթ պլանավորում ենք պարտադիր ծախսերը: Այսինքն, **աղբահանություն, նախադպրոցական կրթություն, ունենք արտադպրոցական 6 ՀՈԱԿ, ունենք քաղաքային գրադարան, գյուղերում էս խոշորացումից հետո ունենք մշակույթի տներ, գրադարաններ**, որոնց հաստիքների նույնպես, նաև նախադպրոցական հաստատությունների հաստիքների վճարումը նույնպես համայնքային բյուջեից ա կատարվում և արդեն մնացած ոլորտներում, որը պարտադիր չի: Մի օրինակով ասեմ՝ հենց մեր շոշափելի էսօրվա թեման սոցիալական ոլորտը: Իհարկե, անսահմանափակ էլ, որ նախատեսենք, էլի բավարար չի, որովհետև ամբողջ հանրապետության վիճակն ա: Մինչև աշխատատեղ չստեղծվի՝ սոցիալական խնդիր լինելու ա: Նախկինում, կարող ա մի քիչ ուրիշ ձևի մենկաբանվի, բայց սովետական միության տարիներին բոլորին հարմար աշխատանք կար»: (**Միսիան**)*

*«Տեղական բյուջեն կազմվում ա համայնքի ղեկավարի և ավագանու հետ, ինչպես նաև հաշվապահի ներկայությամբ, պարտադիր: Քննարկվում է ավագանու նիստում՝ կողմ, դեմ, առաջարկություններ և այլն, ամեն ինչ հաշվի է առնվում, նոր ընդունվում ա տեղական բյուջեն»: (**Գորիայք**)*

Ինչ վերաբերում է բնակչությանը, ապա, բացի ՀՈԱԿ-ների տնօրեններից ու հաշվապահներից, մյուս մասնակիցների շրջանում հստակ նկատվում էր անտեղյակություն (անգամ դպրոցների ուսուցիչների և ՀԿ-ների ներկայացուցիչների շրջանում) բյուջեի կազմման գործընթացների վերաբերյալ, ինչը, առաջին հերթին, պայմանավորված է համայնքապետարանի կողմից բնակչությանը լավ չիրազեկելու հանգամանքով, ինչպես նաև՝ բնակչության կողմից խնդրի նկատմամբ ունեցած անտարբերությամբ:

Ինչն, իր հերթին, նշանակում է, որ բյուջեի կազմման ու հաստատման գործընթացներում չի ապահովվում (եթե չասենք՝ խախտվում է) լայն հասարակայնության մասնակցության սկզբունքը:

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

Այդուհանդերձ, մասնակիցների մեծ մասը տեղյակ էր, որ բյուջեն կազմում է համայնքապետարանը, ապա համայնքի ղեկավարն այն ներկայացնում է ավագանու հաստատմանը:

Ֆոկուս խմբային քննարկումներից՝

«Յուրաքանչյուր տարվա վերջ, նոյեմբեր ամսին, երբ որ բյուջեն կազմվում ա, հիմնականում տեղական վարչական ղեկավարները, ավագանու ներկայացուցիրները, համայնքի ղեկավարը, հիմնարկների տնօրենները, բոլորը ներկա են լինում, ժողով է անցկացվում և տեղեկացվում են բյուջեին, թե ինչ գումարներ կան, ինչը ինչի վրայա ծախսվում, ինչն ա կարևոր էդ պահին: Արդեն պատրաստի բյուջեն է ներկայացվում»:

«Կարող ենք տրամաբանել, բայց իրականում տեղյակ չենք»:
«...կայքի միջոցով քվեարկում կար, պլանավորում կար, դրան եմ մասնակցել, նենց ընդհանուր տեղեկություն չունեմ»:
*«Անկեղծ ասած, չենք էլ հետաքրքրվել, որ իմանանք... Ավելի շատ տնօրեններն են տեղեկացված, մեկ էլ ավագանու ներկայացուցիչները»: (**Բերդ**)*

*«Հիմնականում, ամեն տարվա սկզբին և նախորդ տարվա վերջին, ավագանու քննարկմանն է ներկայացվում բյուջեն: Քննարկումներից հետո ավագանին հաստատում է: Որքանով որ տեղեկացված եմ, ավագանին նաև ծախսային մասն է վերլուծում և հիմնավորում»: (**Արենի**)*

«Ոչ, միշտ էլ հասարակությունը նման խնդիրներից հեռու է մնացել, ով է մեզ իրազեկել կամ ով է տեղեկացրել»:
«Տեղյակ են նրանք, ովքեր այդ ոլորտում են աշխատում»:
«Աշխատանքի բնույթից է կախված, թե չէ մեզանից յուրաքանչյուրն էլ անտեղյակ է, մեզ ինչ հրամցրել են, այդպես էլ գիտենք»:
*«Գիտենք պետական ծախսեր, աշխատավարձ: Եկամուտ և ծախսեր հաշվի առնելով՝ թե ինչ աշխատանքներ պետք է կատարվեն, դրան զուգահեռ նաև եկամուտները և ծախսերը, որից հետո պանավորում են աշխատանքները և բաշխումը»: (**Գլաձոր**)*

«Կազմում ա աշխատակազմը, տարբեր ոլորտների ծախսերը միացնում են իրար, տարբեր ստորաբաժանումների, համայնքապետարանի ենթակայության տակ, հատկացնում են տարեկան կտրվածքով գումարներ, դրան գումարած նաև սպասարկման ծախսեր՝ լինի դա լուսավորություն, ընթացիկ վերանորոգումներ, լինի դա վերելակների կամ բազմաբնակարան շենքերի սպասարկման համար»:
*«Ինչքան գիտենք, ավագանին պիտի հաստատի: Աշխատակազմը ներկայացնում ա, գործադիրը ներկայացնում ա, օրենսդիրը հաստատում»: (**Կապան**)*

«Բյուջեն կազմվում է համայնքապետարանի կողմից»:
«Քննարկումներ են լինում համայնքային ենթակայության կառույցների ներկայացուցիչների, բնակավայրերի վարչական ղեկավարների հետ»:

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

*«Ներկայացվում է ավագանու հաստատմանը»: (**Մեղրի**)*

«Բյուջեն կազմվում է համայնքապետարանի կողմից»:
*«Մանկապարտեզից ներկայացնում ենք մեր ծախսերը, բայց հետո էլ չենք խառնվում»: (**Շինուհայր**)*

«Մեզնից (ՀՈԱԿ-ներից) ուզում են կոնկրետ մեր հիմնարկի ծախսերը, եկամուտները, կազմում ենք նախօրոք, հանձնում ենք: Մնացածներն էլ, բոլոր ենթակա կառույցները նույնը»:
«Նույնը ես կարող եմ ասել, 19 թվականի համար արդեն սկսել ենք, կազմել ենք: Ամեն տարի նույն ձևով կազմում ենք»:
«Դե, ամեն տարի հիմնականում նույնն ա, բայց կարող ա տարվա ընթացքում չնախատեսված մի հարց առաջանա, էսինչ բանի կարիքն ունենանք, ավելացնում ենք: Ասենք՝ գույքի կարիք ունենք, ավելացնում ենք: Հմի քաղաքապետարանը կհաստատի, թե չէ… Նախահաշիվը կազմում ենք, տալիս ենք իրենց քննարմանն, էլի: Իրենք հետո հաստատում են: Հունվարի մեջ տալիս են հաստատված նախագիծը՝ ծախսերի, եկամուտների: Դե, մենք եկամուտ չունենք, ծախսեր ա մենակ: Բյուջետային կազմակերպություն ենք»:
*«Մեզնից ուզում են կոնկրետ մեր հիմնարկի ծախսերը, եկամուտները, կազմում ենք նախօրոք, հանձնում ենք: Մնացածներն էլ, բոլոր ենթակա կառույցները նույնը»: (**Միսիան**)*

*«Համայնքի ղեկավարը ներկայացնում է ավագանու նիստի ժամանակ, ու հետո ավագանին պետք ա հաստատի: Հետո ուղարկում են Կառավարություն…»: (**Գորիայք**)*

Հնգամյա զարգացման ծրագրերում հիմնականում ընդգրկված են աշխատավարձերը, ՀՈԱԿ-ների, հատկապես և հիմնականում՝ մանկապարտեզների պահպանության, վերանորոգման կամ շինարարության ծախսերը, դպրոցների, համայնքապետարանի շենքի վերանորոգման հարցերը:
Միայն Կապանում անցկացված ֆոկուս խմբային քննարկման ժամանակ նշվեց, որ 5-ամյա զարգացման ծրագիրը կազմելուց առաջ, ստեղծվում է աշխատանքային խումբ՝ այդ աշխատանքներն իրականացնելու համար:
Բացի այդ, ունեն ավագանիով հաստատված խորհրդակցական մարմին՝ զարգացման ծրագրերը և բյուջեն քննարկելու համար:

Ֆոկուս խմբային քննարկումներից՝

*«Եթե, ասենք, հնգամյա զարգացման ծրագիրը ամեն մեկս, ասենք, մեր համայնքի առաջնահերթ խնդիրների մեջ ներկայացնում ենք ու ընդհանուր Բերդ համայնքի զարգացման ծրագրերի մեջ ներառվում ա: Մեր համայնքին, օրինակ, ես ներկայացրել եմ դպրոցի շենքի հիմնանորոգում, համայնքային կենտրոնի վերակառուցում, սենց, ու դա ներառվում ա զարգացման հնգամյա ծրագրում»: (**Բերդ**)*

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

*«5 –ամյա զարգացման ծրագիրը նույնպես կազմվում է աշխատակազմի կողմից: Իրենք կազմել են, քննարկվել է և ներկայացվել է ավագանու հաստատմանը»: (**Արենի**)*

*«Նախապես հայտարարություն ենք անում, որ ստեղծվելու է աշխատանքային խումբ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը կազմելու համար և մարդկանց առաջարկում ենք գալ, ընդգրկվել աշխատանքային խմբում: Բացի այդ, ավագանիով ունենք հաստատված խորհրդակցական մարմին՝ զարգացման ծրագրերը և բյուջեն քննարկելու վերաբերյալ: Հայտարարությունը տալիս ենք, ովքեր որ ցանկություն են հայտնում՝ գալիս են, ստեղծվում է աշխատանքային խումբ համայնքի ղեկավարի որոշմամբ և աշխատանքային խումբը սկսում է աշխատել ծրագրերի վրա: Մենք ստանում են առաջարկություններ և ենթակառույցներից, և վարչական ղեկավարներից, որ խնդիրն է, որ ուզում են ընդգրկել հնգամյա զարգաձման ծրագրի մեջ: Քաղաքաշինության բաժինը այս ծրագրերի հետ կապված կազմում է մոտավոր նախահաշիվներ, քանի որ նախագծանախահաշվային փաստաթղթեր չենք պատվիրում, դրանց մոտավոր արժեքները գրում են, մենք ընդգրկում ենք հնգամյա ծրագրում, իսկ առաջնահերթությունը արդեն աշխատանքային հանդիպումների հանձնաժողովի նիստերի ժամանակ առաջնահերթության կարգով, որը որ ավելի կարևոր ա, դա ավելի առաջնահերթ ա, իսկ այս պահին՝ որը շտապ լուծում ա պահանջում, այդ խնդիրները, ըստ տարիների բաժանում ենք, ընդգրկում ենք և կազմում ենք հնգամյա զարգացման ծրագիր: Հնգամյայում ընդգրկված է նույն աշխատավարձները, նույն մանկապարտեզների պահպանությունը, ենթակառույցների վերանորոգման հարցերը: Մենք ունենք 31 ենթակառույց՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ, այսինքն՝ այդ բոլոր ենթակառույցների վերանորոգում: Չգիտեմ, ամեն մի տեղ մի հարց ա էլի առաջանում, պատկերացնում եք երեսունմեկ ենթակառույց պահելը ինչ մեծ դժվարություն ա ու ինչ ծախսեր է պահանջում, որից տասնվեցը մանկապարտեզ է, այո, չորս գյուղերում»: (**Կապան**)*

Հնգամյա զարգացման ծրագրերի մշակման և ընդունման հարցում նույնպես նկատվում է բնակչության տեղեկացվածության պակաս, անգամ՝ բացարձակ անտեղյակություն, ինչը հիմնականում պայմանավորված է.

- ❖ բնակչության անտարբերությամբ.
- ❖ համայնքների կողմից նախաձեռնողականության պակասով, ինչը չի խրախուսվում նաև ներկայիս բյուջետային համակարգով.
- ❖ համայնքապետարանների կողմից նոր բան առաջարկելու անկարողությամբ.
- ❖ նորարարական ծրագրեր առաջարկելու ու դրանք կառավարելու հարցում համայնքապետարանի աշխատակիցների ոչ կոմպետենտ լինելով.
- ❖ տեղական բյուջեների հնարավորությունների սղությամբ, քանի որ դրանք շարունակում են լինել ավելի շատ պահպանման բյուջեներ, այլ ոչ թե զարգացման:

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

Ֆոկուս խմբային քննարկումներից՝

«Ուղղակի մեր ոլորտը չի»:
«Հարցը նենց չի, որ ուզել ենք՝ տեղյակ չենք, ուղղակի չենք հետաքրքրվել, կոնկրետ ես չեմ հետաքրքրվել»:
*«Ես համաձայն եմ իրա հետ, երևի թե մեր աշխատանքային զբաղվածության մեջ խորացած, ամենքս մեր ոլորտի մեջ ենք, թե չէ չեմ կարծում…»: (**Բերդ**)*

«5 տարվա համար ծրագրված բոլոր գործողությունները և նպատակները»:
*«Կանխատեսումները, անելիքները տվյալ տարվա համար և պատասխանատուները»: (**Արենի**)*

*«Դե, իհարկե, տեղյակ չենք»: (**Գլաձոր**)*

Սակայն, անգամ նրանք, ովքեր մասնակցել են զարգացման ծրագրերի կազմման գործընթացին, գոհ չեն թե քննարկումների ընթացքից, թե արդյունքներից, նշելով, որ շատ հաճախ այդ քննարկումները կրում են ձևական բնույթ:

Ֆոկուս խմբային քննարկումներից՝

*«Մի բան էլ էի ուզում ասել զուտ ոչ թէ բյուջեի մասին, այլ բյուջետային պրոցեսի մասին: Ես քանի որ մասնակցում էի հնգամյա պլանի ստեղծմանը, ուրեմն՝ ինքը միչև հիմա ոնց ա եղել (հիմա չգիտեմ ինչ պրոցեսներ է գնում, թե փոխվելու է, այսինքն, բյուջետային պրոցեսը)՝ ինքը այնպես է անում, որպեսզի ոչ մեկը չփորձի ինչ-որ բան նախաձեռնել, այսինքն զուտ գրվում է այն, ինչի վրա միլիոն տոկոս, եթե մենք մեր մոտ էլ չլինի, վերևից տրվելու է: Կա պարտավորված ստածիաներ և չպարտավորված ստածիաներ, այ փորձում է չպարտավորված ստածիաների մասը ընդհանրապես ոչինչ չգրել, զուտ պահպանված ստածիաները գրել, որ եթե մենք էլ չհավաքենք, վերևից կխնդրեն օրենքով պաշտպանված հոդվածներ են, մեկ ա, այսինքն ինքը բյուջետային համակարգը, ինքը չի ստիպում, որպեսզի համայնքները նախաձեռնեն …: Քաղաքը չունի ոչ մի մոտիվացիա փող աշխատելու, սեփական ուժերով փող աշխատելու, քանի որ ես մի հատ հարց եմ տալիս, որին ոչ մեկը չի կարողանում պատասխանի: Ում հարցնես՝ ասացեք մեր համայնքի ակտիվները ինչ արժեն, ոչ մեկը այդ հարցին չի կարա պատասխանի: Չէ որ ակտիվներ ասելով հասկանում ենք նաև համայնքային հողերը, շինությունները, սարը, ձորը, ոչ մեկը չի մտածում ակտիվների կառավարման տեսանկետից»: (**Կապան**)*

Մինչ բյուջեն (կամ զարգացման ծրագրերը) կազմելն ու ընդունելը, համայնքներում, չնչին բացառությամբ (օրինակ՝ Սիսիան և Տեղ համայնքները), չեն իրականացվում համապատասխան վերլուծություններ կամ հետազոտություններ, որոնք թույլ կտան վերհանել համայնքի բնակիչների, հատկապես՝ խոցելի խմբերի, իրական կարիքները:

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

Սիսիան և Տեղ համայնքների բացառություն լինելը պայմանավորված է նաև սոցիալական աշխատող ունենալու կարևոր հանգամանքով, ով լրացուցիչ և անփոխարինելի ռեսուրս է գենդերային հիմնախնդիրներն ու խոցելի խմբերի ձայնը տեղ հասցնելու առումով:

Համայնքապետարանների հետ ֆոկուս խմբային քննարկումներից՝

*«Առաջնահերթություններին ինչ-որ սանդղակ կամ բանաձև չկա: Ուղղակի, եթե մեկին հանձնենք, որն է կարևոր՝ խմելու ջուրը, թե ասֆալտապատումը, պարզ է, որ կարևորը կենսականն է: Մենք ենք որոշում՝ որն է առաջնահերթ, քննարկման արդյունքում»: (**Գլաձոր**)*

*«Հատուկ վերլուծություն չի կատարվել, բայց համայնքը բավականին փոքր է, բնակիչների խնդիրները, կարիքները տարբեր հանդիպումների ժամանակ բարձրաձայնվում և բացահայտվում են»: (**Մեղրի**)*

*«Մի բան էլ ավելացնեմ: Սա զուտ բյուջեի կազմման մասով, բայց մինչև այդ էլ մենք հավաքագրել ենք բոլոր բնակավայրերի ուժեղ ու թույլ կողմերը, ամբողջ ռեսուրսները… ՏԱՊ-ի ծրագրով (տարեկան աշխատանքային պլանի ծրագրով) կան այդպիսի աղյուսակներ, որ պիտի լրացվեն: Կան արդեն ֆիքսված տվյալներ: Վիճակագրական տվյալներ՝ սահմանները, քանի հա հող կա, բնակիչների խտությունը, սեռատարիքային խմբերը, մասնագիտությունը: Մանրամասն տվյալները մեր բաժնի աշխատակիցների կողմից հավաքագրվում են և նաև էդ տվյալների վերլուծությամբ էլ որոշվում է խնդիրների առաջնահերթությունը: Սկզբում 5-ամյա պլանով, հետո արդեն տարեկան պլանով, հերթով, որ կարողանանք էդ սուր խնդիրները լուծենք: Լինում է, որ ընթացքում էլ են խնդիրներ առաջանում՝ աղետների հետ կապված: Ռիսկային գոտի ենք, ամեն դեպքում: Նորից լրացուցիչ ահազանգն էդ դեպքում ա լինում: Գյուղերից էլ խնդիրներ են հնչում: Վարչական ղեկավարներն անմիջապես ազդարարում են»: (**Սիսիան**)*

Բնակչության հետ ֆոկուս խմբային քննարկումներից՝

«Առհասարակ, ՍՎՈՏ վերլուծություն չի արվում մինչև բյուջե կազմելը, հաստատելը»:

*«Ես ոնց իմանամ, իմ գործունեությունը քաղաքի վրա ինչ-որ մի ձևով դրական ազդել ա, թէ չէ: Չի հավաքագրվում վիճակագրական տվյալներ: Ես բազմիցս առաջարկել եմ, որպեսզի բնապահպանական սուբսիդիաներով վճարները, որ տրվում է պետբյուջեից, որպեսզի տեղական ինչ-որ մի լաբարատորիա ստեղծվի հետազոտական, հանրության առողջության ուսումնասիրման համար, որ միևնույն ժամանակ նաև հողի, օդի, ջրի ուսումնասիրության համար է, բայց բնապահպանական վճարները օգտագործում են մայթերի կառուցման, վերանորոգման համար, որը ճիշտ չի»: (**Կապան**)*

«Վերլուծությունների կամ հետազոտությունների մասին տեղյակ չենք»:
*«Տարբեր կառույցներում, բնակավայրերում հանդիպումների ժամանակ բնակիչների կողմից բարձրացվում են խնդիրներ, կարիքներ»: (**Մեղրի**)*

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

*«Ուղղակի, ցավոք, մի բան կարող եմ ասել: Մեր բյուջեն սոցիալական տողով գումար չի նախատեսում՝ընտանիքների, համայնքում սոցիալական խնդիրների լուծմանը: Իմ կարծքով, եթե ամեն հիմնարկ ներկայացնում ա իր նախահաշիվը, էդ նույն բանը պիտի անի նաև սոցիալական ծառայությունը , ասենք ՝ քանի հաշմանդամ կա, ինչ գումարներ ա ծախսվելու, քանի անապահով ընտանիք կա…Սոցիալական աշխատողը նոր ա աշխատում: Ինքը վատ չի աշխատում, լավ ա աշխատում, բայց ամեն դեպքում էդ հաշվարկները պետք ա նախապես արվի, որ վերջում չասեն՝ ախր չգիտենք, ինչքան ա լինելու: Այ, տենց են ասում, երբ որ կլինի՝ պահուստային ֆոնդից էս կանենք, էն կանենք և այլն»: (**Միսիան**)*

Ինչ վերաբերում է տեղական հարկերի ու տուրքերի, այսինքն՝ համայնքային բյուջեում սեփական եկամուտների հավաքագրմանը, ապա, համայնքապետարանի աշխատակիցների պնդմամբ, այն բավականին բարելավվել է: Սակայն համայնքից համայնք նկատվում են էական տարբերություններ:

Կան համայնքներ, որտեղ հարկահավաքագրումը 90%-ից ավել է:

Առավել լավ հավաքագրվողը՝ գույքահարկն է, ամենավատը՝ հողի հարկն ու աղբահանության վճարները:

Եվ կան համայնքներ, որոնք ունեն լուրջ խնդիրներ՝ սեփական եկամուտները հավաքագրելու հարցում, ինչը պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

1. տեղական հարկերի հավաքագրման փոփոխված ընթացակարգերը.
2. հերթական <հարկային համաներման> սպասելիքները՝ <ինչու վճարենք, միևնույնն է Վարչապետը պարտքերը կզրոյացնի>: Այդ սպասումներն ունեն նախադեպ՝ տարիներ առաջ Կառավարությունը զրոյացրեց բոլոր պարտքերը, ինչի արդյունքում անգամ պարտաճանաչ վճարողներն այլևս չեն ցանկանում վճարել իրենց հասանելիք հարկերը՝ հերթական անգամ իրենց խաբված չզգալու համար: Համայնքապետարանների աշխատակիցները նույնիսկ բանկերից վարկով փող էին վերցնում, որպեսզի փակեն բնակիչների չվճարված հարկերն ու տուրքերը, բայց համաներումից հետո մնացին ձեռնունայն, ստիպված լինելով ինքնուրույն փակել վերցված վարկերը:
3. Բնակավայրի մոտակայքում (օրինակ՝ Գորիայքում) խոշոր հանքերի առկայությունն ու դրանց շահագործումը թույլ է տալիս բնակավայրին զոյատևելու և զարգանալու զուտ վերջիններից կողմից իրականացվող ներդրումային և սոցիալական ծրագրերի հաշվին, անգամ՝ չհավաքագրել սեփական եկամուտները:

Ֆոկուս խմբային քննարկումներից՝

*«Բավականին հավաքագրվում ա»: (**Բերդ**)*

«Հիմնականում այո, բոլոր բնակավայրերում էլ հավաքագրվում է»:

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

«Մի տեղ, կարող է, տուրքն է պակաս»:
*«Ըստ ժամանակացույցի ապահովվում է: Մի հարկատեսակ կարող է փակել մյուսներին: Մոտավորապես 90 տոկոսից ավել կատարվում են»: (**Արենի**)*

*«14 մլն մենք և Եղեգնաձորն ենք հավաքագրել: Շատ լավ ցուցանիշ է: Այս տարի մի քիչ խնդիրներ կան հավաքագրման հետ կապված, ընթացակարգը փոխվել է: Տարվա վերջում կունենանք լավ ցուցանիշ: Հա, ընդունված կարգ է, որ տարվա վերջում լավ կլինի, սեզոնային է, սեփական եկամուտները այդ ժամանակ են լինում: 28-27 տոկոսն է կազմում, մնացածը պետությունն է տալիս»: (**Գլաձոր**)*

*«Եկամտային մասը, մենք գիտենք, ձևավորվում ա շատ չնչին եկամուտներից, որը տարիներ ի վեր միշտ էլ հավաքագրվել ա վնասով՝ դա հիմնականում բնակչությունից ա հավաքագրվում: Բայց չէ, չենք թողնում այդպես պարտքեր, որովհետև ունենք ապառքներ, ապառքների վերաբերյալ ժամանակացույց է կազմվում և յուրաքանչյուր տարի այդ ապառքները մարվում ա»: (**Կապան**)*

*«Տեղական հարկերն ու տուրքերը, հիմնականում, հավաքվում են առանց խնդիրների»: (**Մեղրի**)*

"Բյուջեի եկամտային մասը կազմում է 182 մլն, որից 132 մլն-ը դոտացիան է, 50 մլն-ը սեփական եկամուտները":
"Աղբահանության վճարը դժվար են տալիս, օրինակ՝ 7 շունչ են, ամիսը 700 դրամ է, չեն տալիս: Գյուղացին ասում ա՝ ես իմ այգում փոս եմ փորում, լցնում: Գույքահարկը 100%-ով հավաքվել է":
*"Սվարանց բնակավայրում հողի հարկի տարեկան չափը 823 000 դրամ է, հավաքվել է ընդամենը 60 000-ը: 400-500 բնակիչ է եղել, հիմա փաստացի 80 մարդ է ապրում: Հողերի մեծ մասը չեն մշակում, հիմա առաջարկում ենք անվանափոխել, որ մշակեն, բայց հրաժարվում են": (**Շինուհայր**)*

*"100 տոկոս և ավել միշտ ցուցանիշ ենք ունենում: Ընդհանուր ցուցանիշի մասին եմ ասում": (**Միսիան**)*

"Չէ, 2008 թ. կառավարությունը գիջեց, մարդիկ հիմա ասում են՝ միաննույն ա, մենք գիտենք Փաշինկյանն ա, ժամանակ ա գալու, որ ինքն էլ ա զրոյացնելու: Մարդ կա, ասում ա՝ Մարիետ, ասում էիր՝ քո թոշակից տուր, չեկանք հավասարվեցինք իրար: Դու մուծել էիր, ինձ էլ գիջեցին": "Մարդ կա, վարկ էր վերցրել, հողի հարկի պարտքը մուծել, հենց հաջորդ օրը էդ գիջումն եղավ: Պատկերացնում եք դուք: 500.000 հողի հարկ մուծես ու զրոյանա":
*"Եթե , օրինակ Լիդիանից մարդիկ իրենց աշխատավարձից տալիս էին, եկան մյուսներին գիջեցին: Հիմա հենց իրենք չեն վճարում, ասում են՝ եթե ես թույնի մեջ իմ աշխատածից բերել եմ տվել, մյուսները չեն տվել ու հավասարվել ենք, ինչու պիտի էլի տամ": (**Գորիայք**)*

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

Սակայն ֆոկուս խմբերում մասնակցած բնակչության ներկայացուցիչները հավաստիացնում էին, որ բնակչությունը, հիմնականում, պարտաճանաչորեն վճարում է հասանելիք հարկերն ու տուրքերը:

Ֆոկուս խմբային քննարկումներից՝

«Պարտադիր վճարում են, մեր բանկիչները չեն խուսափում, պարտաճանաչ վճարում են/:
«100 տոկոսից բարձր է»:
«Գիտակցությունը բարձր է, արդեն ձևավորված է»:
*«Մեր բնակչության համար դա մեծ պլյուս է»: (**Արենի**)*

*«Վճարում ենք մինչև տարեվերջ: Մեզ ասում են, որ եթե վճարումները կատարեք, լավ կլինի»: (**Գլաձոր**)*

«Հողի հարկը կասկածում եմ, որ ամբողջությամբ հավաքում են, գյուղական համայնքներ կան, որ մի քիչ պասիվ են, բայց քաղաքայինը...»:
«Մարզպետարանը պարբերաբար թվեր ա ներկայացնում, նկարում, բայց դե չգիտեմ, որքանով ճիշտ է»:
*«Ես հիշում եմ, որ փոքր տոկոս էր, շոկի մեջ էի, որովհետև, որ բյուջեի մեծ մասը գալիս ա կառավարությունից, զցեցի մի կողմ, հավես էլ չկար էլ նայելու, անհասկանալի բան էր իմ համար»: (**Կապան**)*

«Բյուջեի եկամտային մասը՝ հարկերը, տուրքերը բավականին լավ է հավաքագրվում, համայնքի բնակիչները հիմնականում վճարունակ են, գործազրկության մակարդակը ցածր է»:
«Ես ԱՁ ունեմ, նախկինում, օրինակ, ծխախոտի վաճառքի համար նախատեսված տուրքը անհասկանալի ձևով էին գանձում, հիմա կարգավորվել է, հստակ է, ընդ որում, արդյունքում, միջին հաշվով ավելի քիչ ենք վճարում»:
*«Ավելացվել է կոմունալ վճարները, մեկ շնչին 250 դրամ, տնտեսվարողների համար էլ հստակ գումարներ են սահմանել»: (**Մեղրի**)*

«Հարկերը, տուրքերը բավականին լավ է հավաքագրվում, ովքեր էստեղ են, հիմնականում վճարում են, եթե չեն վճարում, ուրեմն խնդրում են մի քիչ ուշ տան, որովհետև չունեն»:
«Հարկերը բարձր չեն, մի հեկտարը մոտ 5 000 դրամ: Ամենաշատը 3-4 հեկտար հող ունեն»:
*«Չեն աշխատում, ոնց տան, մարդ կա նպաստ ա ստանում, 1000-1500 տալիս ա, էս ամիս ընդանրապես չեն տալիս, երեխաների հագուստ, դպրոցի համար ծախսեր..»: (**Շինուհայր**)*

*«Ընդհանուր առմամբ հավաքագրումը նորմալ ա ընթանում, որովհետև անգամ ենթակա կառույցների աշխտողները պարտքեր ունենում են, իրենք ուսումնասիրում են, ուզում: Մեզ էլ են ներկայացնում. հողի հարկ լինի, գույքահարկ լինի»: (**Միսիան**)*

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

Տեղական/համայնքային բյուջեների ծախսային հոդվածները հիմանականում ուղղվում են հետևյալ խնդիրների լուծմանը.

- ապարատի աշխատավարձ և պահպանման ծախսեր
- մանկապարտեզների պահպանման (աշխատավարձ, սնունդ, կապ, էլեկտրաէներգիա, ջեռուցում) և վերանորոգման ծախսեր
- այլ ՀՈԱԿ-ների պահպանման ծախսեր
- ջրագծերի ներքին ցանցի վերանորոգում կամ նոր ջրագծերի անցկացում
- ճանապարհների խճապատում, մասնակի վերանորոգում
- շինարարություն
- կապիտալ ծախսերի համաֆինանսավորում
- լուսավորություն,
- աղբահանություն,
- սոցիալական աջակցություն
- տրանսպորտ (շատ քիչ թվով համայներում):

Համայնքապետարանի հետ ֆոկուս խմբային քննարկումներից՝

"Մեր հիմնականում բյուջեն ծախսում ենք ջրամատակարարման վրա, մենակ Բերդ քաղաքն ա, որ ջրահոսի տակ ա, միշտ սուբվենցիա ենք ոնց որ տալիս էլի ջրամատակարարմանը":

*"Ճանապարհների վրա ենք, ասենք, որ ամեն տարի ներդրումներ անում, ճանապարհների վրա: Դե մանկապարտեզը, օրինակ, սենց ասեմ, եթե հիմա տարբեր համայնքներում կլինեք, ուրեմն Բերդի տարածաշրջանը, երևի էն միակն ա, համայնքները խոշորացված կլինի թե նենց, որ ամեն գյուղում մանկապարտեզ ունեն ու աշխատացնում են": (**Բերդ**)*

«Աշխատավարձ, շինարարություն, կապիտալ ծախսեր, կոյուղագծեր, ջրագծեր, 4 մանկապարտեզների խնդիրները»:
«Մանկապարտեզները կոտրում են բյուջեի ողնաշարը: 9 ամիս են աշխատում, գումարները գնում են երեխաների սննդի, ջեռուցման վրա: Որպես հանրակրթության ոլորտ՝ գոնե հաշվի առնվեն մանկապարտեզները և որպես դոտացիա տան դրանք պահելու համար: 33 միլիոնանոց ընդհանուր համայնքի բյուջեից 14 մլն. գնում է մանկապարտեզի վրա, պատկերացնում եք դա ինչ է: Չես կարող չանել»:
«Դրա համար էլ ոչ բոլոր համայնքերում կան մանկապարտեզներ: Բյուջեի 1/3-ը գնում է մանկապարտեզների պահպանության վրա»:
*«Բավականին ձեռնպահ ենք մնացել, 3 տոկոսն է միայն սոցիալական աջակցությունը: Մենք որդեգրել ենք հետևյալ սկզբունքը՝ ժողովրդին տալ ոչ թե ձուկը, այլ կարթը, որ ձուկ որսան: Դրա համար ծախսում ենք արոտների վրա, ջրամատակարարման վրա, ենթակառուցվածքների: Սոցիալական վիճակը վատ է, գյուղում պետք է հող, ջուր, որ կարողանան աշխատել և ստեղծել: Գումար տալիս ենք այն մարդուն, ով հաշմանդամ է, ի վիճակի չէ աշխատելու, կամ տարեցներին, բազմազավակներին»: (**Արենի**)*

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

«Ենթակառուցվածքների բարելավում: Աշխատավարձի ֆոնդը կազմում է 25 տոկոս: ՊՈԱԿ-ներին՝ այսինքն 3 մանկապարտեզներին, և Գլաձոր համայնքային տնտեսությանը 46 մլն. դրամ: Այս պահին շինարարություն է գնում, 27 մլն, մեր չափաբաժինը 16 մլն դրամ է՝ ճանապարհներ, Գետափում՝ 2,5 մլն նախատեսված է, այս պահին՝ ջրագիծ, 2-րդ փուլում 30 տոկոս համաֆինանսավորմամբ Վերնաշենում՝ խմելու ջրի ներքին ցանց:
Նախկին կառավարության ժամանակ պիլոտային ծրագիր էր տեխնիկայի հետ կապված, դեռ սպասում ենք:
*Լուսավորություն, աղբահանություն, սոցիալական՝ գումարային ձևով անապահով ընտանիքների երեխաներին, հաշմանդամներին, նորածիններին»: (**Գլաձոր**)*

*«Արդեն այստեղ մենք ստիպված ենք լինում այլընտրանքով առաջնորդվել, այսինքն առաջնահերթությունը տալով ենթակա կառույցներին, հիմնականում ընթացիկ ծախսերն ենք իրականացնում՝ աշխատավարձեր, մանկապարտեզների սնունդ, էլեկտրաէներգիա, կապ, հետո, արդեն հնարավորության սահմաններում, լրացուցիչ ինչ-որ բաներ ա իրականացվում և բյուջեն կազմելուց հետո, այսինքն՝ բյուջետային համակարգի մասին օրենքով մեր բյուջեն ունի դասակարգում, ունի բաժին, դաս, խումբ, մենք չենք կարող այդ խմբերից դուրս գալ, և ամեն մի կազմակերպություն , ամեն մի ծախս ունի իրա ուղղվածությունը և այդ ուղղվածությունից արդեն ծրագրեր է բացվում»: (**Կապան**)*

«Աշխատավարձ, համայնքային ենթակայության հիմնարկների ծախսեր: Միջհամայնքային տրանսպորտի ապահովում, դեպի բոլոր բնակավայրեր աշխատում են միկրոավտոբուսներ»:
«Փողոցային լուսավորություն բոլոր բնակավայրերում»:

«Համայնքապետարանի տարածքի կապիտալ վերանորոգում»:
*«Վարդանիձորում կառուցվում է մանկապարտեզի շենք»: (**Մեղրի**)*

"13 համայնքներում ունենք մանկապարտեզներ: Պլանավորել ենք ևս 4 համայնքներում սկսել մանկո ունենալու գործընթացը: Բոլոր այն բնակավայրերում, որտեղ մանկապարտեզի տարիքի գոնե 6-ից ավելի երեխա կա, այնտեղ կունենաք մանկապարտեզային խմբեր: Երեխան, որ ունի կրթություն և դաստիարակություն ստանալու իրավունքը, մենք անպայման ապահովելու ենք":
"Ապարատի պահպանման ծախսերը 20-25% է: Մնացածը՝ երաժշտական, շախմատի, պարի դպրոցներ, մշակույթի կենտրոն, գեղարվեստի դպրոց, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն, ֆուտբոլի դպրոց":
"Ծրագրեր ունենք դպրոցների գույքի, գործիքների: Ֆուտբոլի դպրոցում բավականին լուրջ ներդրում ա կատարվել համայնքի ղեկավարի ՖՖ-ի հետ աշխատանքի արդյունքում: Նոր դաշտ ա կառուցվել՝ բոլոր հարմարություններով, մոտ 1.800.000 դոլարի ներդրում ա կատարվել: Ծրագրել ենք պարի դպրոցը վերանորոգել: Մտածում ենք բնակավայրում ունենալ խմբեր՝ որ համայնքում որ կունենանք տվյալ հարմարությունները: Ասենք դաշնամուր՝ դաշնամուրի խմբակ և այլն: Սկսել ենք քննարկել: Կարիքը նոր ա դուրս եկել!:
"Աղբահանություն, կանաչապատում: Լուսավորության համակարգը ընդլայնվում ա: Ամեն տարի նոր բյուջեով նախատեսում ենք ցանցի ավելացում: Բնակիչներն անընդհատ խնդրում են,

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

*որ իրենց թաղամասերն էլ լուսավորվեն": (**Միսիան**)*

"Ապարատի պահպանման ծախսը մոտավոր 33% է":
"Համայնքային ենթակայության հիմնարկների ծախսը 47%-48% է, ունենք 5 նախակրթարան, 1 երաժշտական դպրոց, 1 բարեկարգման աշխատանքներ իրականացնող ՀՈԱԿ":
"Մնացած ծախսերից է՝ փողոցային լուսավորության ծախսը, լուսավորություն կա բոլոր գյուղերում, բացի մեկից, որտեղ 2 բնակիչ ա, ունենք 90%-անոց ծածկույթ: Աղբահանության 1 շնչին ընկնող գումարը ավագանու որոշմամբ 100 դրամ է, հավաքագրվել է 20%-ից պակաս":
" Ծախսերից է համայնքապետարանի ինտերնետի և հեռախոսային կապի վճարները":
"Սուբվենցիաների ծրագրով իրականացվել է մանկապարտեզի շենքի վերանորոգում, կապիտալ ծախսերի 17 մլն-ից, ավագանու որոշմամբ, 12 մլն-ը հատկացվել է դրան, մնացածը սուբվենցիայից է հատկացվել":
"Աշխատել ենք միջազգայինների հետ, USAID –ի ծրագրով 6 միավոր տեխնիկա ենք ստացել, գրեյդեր, ինքնաթափ մեքենա, էքսկավատոր, աղբատար մեքենա":
"Աղբահանությունը կանոնավոր կերպով իրականացվում է 2 բնակավայրում, մյուսները փոքր բնակավայրեր են, աշխատանքներ են կատարվում":
"Խմելու ջուրը խնդիր է: Շինուհայրում, հատկապես ամառը, օրվա մեջ ամենաշատը կես ժամից երկու ժամ ջուր ենք ստանում: 4 բնակավայր ընդանրապես չի սպասարկվում, 4-ն էլ տրված է Վեոլիա ջրին":
"Ծախսային ուղղությունը, բնականաբար, արդյունավետ չի, միայն ջրագծերի վերանորոգման համար մեծ գումարներ ենք ծախսում, չնայած դա մեր ֆունկցիան չի, բայց հասկանում ենք, որ բնակիչների համար շատ կարևոր է: Ենթադրենք 20 մլն պիտի ծախսենք 1 տարվա ընթացքում, կարող ենք այլ գործ անել, բայց վթարների վրա ենք ծախսում":
*"Ճանապարների վրա էլ ենք ծախսում, մասնակի նորոգումներ ենք անում": (**Շինուհայր**)*

Բնակչության հետ ֆոկուս խմբային քննարկումներից՝

«Առաջնահերթ, ես գիտեմ, որ որոշ չափով անցած տարիներին մանկապարտեզներին էր վերաբերվում, որպեսզի վերանորոգված լինի, էրեխեքի համար բոլոր պայմանները ստեղծված լինի, կարևոր էր: Հաջորդը, ինչքան գիտեմ, բազմաբնակարան շենքերի տանիքներ, մուտքերն ու լուսաթիթեղներ, էս տարվա ծրագրի մեջ մտնում էր, այսինքն 18 թվականին որ ինչա լինելու, արդեն արդյունքը տեսել ենք»:

«Գիտենք, տեղյակ ենք, որ տրանսպորտ ա նախատեսվում միջհամայնքային»:
*«Մայթերի, ճանապարհների հարթեցման, խճապատում, բոլոր համայնքներնում էլ, նոր թաղամասերն էլ հետը»: (**Բերդ**)*

«50 տոկոսը գնում է աշխատակազմի վարչական ծախս, մնացածը համայնքին՝ ճանապարհների վերանորոգում, համայնքի պահպանության»:
«Խոշորացումը շատ դրական քայլ է, հիմա ավելի շատ գործ է արվում, միջոցները կենտրոնացել են մի տեղ, ծախսերն արդյունավետ են: Հարցերն ավելի շուտ են կարգավորվում,

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

*օրինակ՝ խմելու ջրի, դպրոցի մի հատվածի վերանորոգում, բոլորը տեղական բյուջեի հաշվին: Հանդամիջյան ճանապարհն է նորոգվել, սանհանգույցը, փողոցները, ջրատարն է բարելավվել: Աղբահանությունից գոհ ենք»: (**Արենի**)*

«Օրինակ, մեր գյուղում բարեփոխվել է աղբահանությունը: Լավացել է խմելու ջուրը, ճանապարհները»:
«Չէ, ճանապարհները լավը չեն, ներհամայնքային ճանապարհները վատն են»:
«Ես գիտեմ, որ ովքեր դիմել են օգնության համար, ստացել են»:
«Հաշվանդամներ կան, բայց կիմանան հատուկ աշխատակիցները: Մտավոր կան, ներառական մեր դպրոցում չկա, բայց գնում են Եղեգնաձորի դպրոցները»:
«Ես, օրինակ, Գետափ բնակավայրի լուսավորությունից գոհ չեմ, միայն կենտրոնական փողոցներն են լուսավորված: Գիշերը տեղ գնալն անհնարին է»:
«Մեր համայնքի բոլոր 3 բնակավայրերում էլ այդպես է»:
«Լուսավորության խնդիրը միայն կանանց վրա է վատ ազդում»:
«Չէ, ինչու, դրանք մարդ չեն, բայց կանանց և տղամարդկանց վրա այլ կերպ է ազդում, երեխաների վրա ավելի շատ»:
*«Փողոցներում շատ շներ կան, վտանգավոր է շատ: Գուցե հիվանդ են: Համայնքապետարանը շներին վերացնելու գումար չունի: Դրանցով զբաղվող մարդ է պետք»: (**Գլաձոր**)*

«Երբ բյուջեն նայեցի ծախսային մասը, ես իրականում շոկի մեջ էի, որովհետև երեք հիմնական ստածիաները, որոնք ընդհանուր առմամբ իննսուն տոկոս էին՝ դա աղբահանությունն էր, նախադպրոցականը և արտադպրոցականը՝ արվեստի դպրոց, գիմնաստիկա.... Իսկ ութսուն տոկոսը բյուջեի աշխատակազմի աշխատավարձն է, խայտառակություն ա»:
*«Տասը տոկոսը մայթերի վերակառուցում, այսինքն՝ մեկ կոպեկ չի ծախսվում զարգացման համար, դա զուտ դառնում է դպրոցի տնտեսվարի ֆունկցիա՝ կավիճն ա վերջացել, կամ ջնջոցներն են վերջացել»: (**Կապան**)*

«Աղբահանությունը բավականին լավ է կատարվում»:
«Աշխատավարձեր, համայնքային ենթակայության հիմնարկների ծախսեր»:
«Լուծվել է միջհամայնքային տրանսպորտի հարցը, հատկապես՝ ամառը, երբ անհրաժեշտ է ամառանոց գնալ, բայց նաև աշխատել, այդ տրանսպորտը շատ մեծ օգնություն է: Օրինակ, ես երկու երեխա ունեմ, երկու ամիս է Վարդանիձորում եմ ապրում, ամեն օր այդ ավտոբուսներով գալիս եմ Մեղրի աշխատանքի ու վերադառնում»:
«Այս տարի կատարվել է համայնքապետարանի տարածքի կապիտալ նորոգում»:
*«Ես կարծում եմ, որ ավելի ճիշտ կլիներ համայնքապետարանի վերանորոգումը այդքան ճոխ չանել և ծախսի կեսը ուղղել մանկապարտեզի վերանորոգմանը»: (**Մեղրի**)*

«Նախակրթարանի, երաժշտականի, աղբահանության, լուսավորության ծախսեր»:
«Աղբահանությունից գոհ ենք, լավ է կատարվում, նախկինի համեմատ շատ լավ ա»:
«Նախակրթարանի առաջին մասնաշենքի տանիքն է վերանորոգվել»:

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

*«Շինուհայրում ջուրը խնդիր է, և ոռոգման, և խմելու: Խմելու ջուրը մոտ 2 ժամ տալիս են: Համայնքապետարանը Շինուհայրի մի քանի փողոցներում ջրագծերը մասնակի վերանորոգելա: Ամառը ավելի լրջանում ա խնդիրը»: (**Շինուհայր**)*

«Աշխատավարձ, լուսավորություն, աղբահանություն»:
*«Երիտասարդական միջոցառումների վրա ա գումար ծախսվում: Հիշարժան տարեթվերի: Մշակութային միջոցառումների»: (**Միսիան**)*

"Դպրոցն արդեն 4 տարի ա վերանորոգված է, վերանորոգումից հետո լուծվել ա խնդիրը: Մինչ այդ ստեղ էինք դասի գալիս: Ու փեչ էինք վառում: Ջեռուցման անցկացումը համայնքի միջոցով ա արվել: Ու նաև Սպանդարյանի դպրոցը, որ նոր են վերանորոգել: Գազով ա»:
«Պարի խումբ ունենք դպրոցում: Ուսուցչի ճանապարհածախսը համայնք ա տալիս: Եթե Ծաղկաձոր ու այլ տեղեր փառատոններ են լինում, գումարն էլի համայնքը տալիս ա, մենք անվճար գնում ենք»:
«Լուսավորություն ունենք, ջրերի որակը փոխվեց: Խմելու ջուրը: Էն ժամանակ նունիսկ ասում էին, որ դաժե անասուններին չի կարելի էդ ջուրը խմել: Բայց հիմա սարքել են, քլորացնում են»:
«Առաջներում մեքենա էր գալիս, աղբը տանում էր, իսկ հիմա աղբամաններ կան դրված»:
*(**Գորհայք**)*

Երբ քննարկում ծավալվեց բնակչության (հատկապես՝ կանանց, երեխաների և խոցելի այլ խմբերի ներկայացուցիչների) վրա իրականացվող ծրագրերի ազդեցության/արդյունավետության գնահատման մասին, ապա մասնակիցների կողմից այն մեկնաբանվեց որպես այդ խմբերին որևէ աջակցություն ցուցաբերելու հնարավորություն, այսինքն՝ նրանց գումար տրամադրելու, վարձերը զեղչելու, նպաստ, անվճար դասագրքեր ու դպրոցական պարագաներ տրամադրելու հնարավորություն:

Համայնքապետարանի հետ ֆոկուս խմբային քննարկումներից՝

«Գումար տալիս ենք այն մարդուն, ով հաշմանդամ է, ի վիճակի չէ աշխատելու, կամ տարեցներին, բազմազավակներին":

*Օգնությունը կարող է լինել սննդի տեսքով: Մարզպետարանում բարեգործական կազմակերպությունները երբեմն հատկացնում են, մեր համագյուղացիներին էլ են տալիս՝ ըստ ցուցակների: Աղբի, ջրի վարձերն ենք զեղչում, կամ մանկապարտեզի ծնողական վճարները: Դիմումների համաձայն, համայնքապետարանի հանձնաժողովն է քննարկում տվյալ ընտանիքի վիճակը, եկամուտը: Լինում է, որ 4-5 աշխատող ունեցող ընտանիք ներկայացնում է 1 ուսանողի: Նման դիմումները մերժվում են: Նման բաներ էլ են լինում»: (**Արենի**)*

Բնակիչների հետ ֆոկուս խմբային քննարկումներից՝

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

«Այո, գումարով, անվճար դասագրքերի, պայուսակների տրամադրում բազմազավակ ընտանիքներին»:
«Զարգացման հիմնադրամը որոշեց մանկապարտեզ հիմնել 2014 թ-ից, բայց դեռ չկա: Մինչև 5 տարեկան 159 երեխա կա, 1-4 դասարաններում սովորում են 100 երեխա: Միայն 53-ն այս տարի է ծնվել և պիտի ծնվի: Հիմա արդեն 3-րդ երեխան են շատերն ունենում»:
*«Դպրոցն ունի ներառական խմբեր: Հենաշարժողական չեն, հիմնականում լեզվական խնդիրներ ունեն: Դպրոցում չկան թեքահարթակներ»: (**Արենի**)*

*«Օրինակ, մենք անցյալ տարի արել ենք վերելակների սպասարկման ընկերության և աղբահանության վերաբերյալ մոնիտորիգ ու պարզել էինք, որ ինքը շատ անարդյունավետ ա ծախսվում և վերջերս այդ մոնիտորիգի հիման վրա դատական գործ է բացվել կոմունալ ծառայության վրա, երեք միլիոնից ավել հափշտակում գումարի՝ իրականում ավել աշխատողը էին պահում, բայց այդ աշխատողը չկար, բայց վճարում էին անում: Նաև պետական գնումների վերաբերյալ մոնիտորիգ ենք արել, հիմա չեմ հիշում, որովհետև Սյունիքի մարզի մասշտաբով էր, բայց ահռելի մեծ գումարներ էր ծախսվել պետբյուջեից, որը անհայտ ա, ոչ մի տեղ չի երևում, որտեղ ա ծախսվել և ինչի համար ա ծախսվել»: (**Կապան**)*

*«Մեկ շաբաթ առաջ մոտեցա համայքապետի ժամանակավոր պաշտոնակատարին ու ասեցի՝ եկեք մի հատ էլեկտրոնային համակարգ սարքենք, որպեսզի ցանկացած բյուջեի շարժ ավտոմատ, թափանցիկ երևա ուր ա գնում, ինչի համար ա գնում, որ մենք ամեն անգամ չգանք մոնիտորինգ անենք, ցանկացած վարկյանի մտնենք, նայենք: Շատ զարմացա պատասխանից, ասեց՝ նամակ գրեք, կպատասխանենք: Սպասում էի, որ նոր իշխանությունները նոր մոտեցում կունենան, որովհետև տեխնիկապես գիտեմ, որ հնարավոր ա դա անել: Ամեն անգամ չգանք աշխատողին ասենք վերելակների և այլնի համար ցույց տուր այս կամ այն թղթերը, իրենք էլ ասեն՝ նամակ գրեք, մենք կպատասխանենք: Թող երևա, որ ինչի համար ա և ինչ հիմքով հաշվից գնացել ա այն ինչ հաշիվ»: (**Կապան**)*

«Աթայան Արտուրի ժամանակ կար, որ Ազատամարտ կոմիտեն ֆինանսավորվում էր և ազատամարտիկների ընտանիքների անդամները, նրանք, ովքեր առողջական խնդիրներ ունեին, հետազոտման, բուժման, տրանսպորտի ծախսը տալիս էին, թե կոմբինատների միջոցով, թե համայնքապետարանի միջոցով»: (**Կապան**)

«Վերլուծությունից տեղյակ չենք»:
«Օրինակ, Մեղրիի մշակույթի պալատի մուտքում թեքահարթակ է կառուցվել՝ հենաշարժական խնդիրներ ունեցող անձին աշխատանքի վերցնելու ծրագրով»:
«Ես նույնպես այդ ծրագրով եմ ընդունվել Մեղրու պետքոլեջ աշխատանքի, ծրագրի ավարտից հետո էլ շարունակում եմ աշխատել»:
*«Մեղրիի դպրոցները ներառական են, թիվ 2-ը արդեն մի քանի տարի է, բայց թե ինչքանով են դրանք պատրաստ, դժվար է ասելը»: (**Մեղրի**)*

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

«Խաղահրապարակներ պիտի սարքեն: Ոնց որ ծրագրեր կան»:
*«Տարեցների համար ոչ մի բան չունենք: Որովհետև տարեցները հիմնականում հավաքվում են իրենց բակում, ինքնակազմակերպվում են, ինչ-որ բան են սարքում, նստում են էդտեղ, խաղում են: Հա, կա, ճաշարանը բարեգործական աշխատում ա, մարդիկ գնում են, սնվում ենք»: (**Միսիան**)*

Ըստ համայնքապետարանների աշխատակիցների հավաստիացման, բյուջեն կազմելուց և ընդունելուց առաջ նրանք իրականացնում են հանրային քննարկումներ:
Բնակչության կարծիքը գրեթե ճիշտ հակառակն էր, թեև խոստովանում էին, որ, առաջին հերթին, իրենց անտարբերության պատճառով է, որ իրենք տեղյակ չեն կամ չեն մասնակցում այդ քննարկումներին:

Ֆոկուս խմբային քննարկումներից՝

"Հայտարարություն ենք տալի, որ համայնքում էսօրը հասարակական ժողով ունենք: Հայտարարությունը մարդաշատ տեղերում փակցնում ենք, հիմա, դե, ասենք, կապը կա էլի, արդեն facebook-ը կա, կապը կա էլի ինտերնետային:
*"Դե, էկողը գալիս ա: Որ, ասենք, տենց շատ ոգևորված մասնակցում են, չէ, բայց ակտիվ մասը մասնակցում ա: Էն մեկն էլ, եթե չի գալի, ասենք, հետո ասում ա՝ բա ես էս չեմ իմացել, հայտարարությունը կա, ասենք, էտ մեր մեղքը չի, որ, ասենք, չի իմացել: Ավելի շատ տղամարդիկ են գալիս": (**Բերդ**)*

«Բոլոր բնակավայրերում՝ ոչ, բայց քննարկել ենք շահագրգիռ կողմերի հետ: Տարեկան աշխատանքային պլանի 2018թ. մի քիչ բարդ է ժողովրդի կողմից քննարկումներ կազմակերպել, ժողովուրդը տեղյակ չէ, իսկ ավագանին ժողովրդի կողմից ընտրված մարդիկ են, որոնք պետք է հաստատեն, տեղյակ լինեն և կարողանան մարդկանց հարցերին պատասխանել":
"Մինչև բյուջեն կազմելը և իրականացնելը, բնակիչների հետ քննարկումներ առաջնահերթ խնդիրների վերաբերյալ անցկացվել են, բայց ոչ մեծ մասշտաբով":
"Այստեղ կան խնդիրներ բնակիչների հետ կապված՝ պասիվ են, չեն մասնակցում, չեն իմանում խնդիրները, անտարբեր են":
*"Փորձը ցույց է տալիս, որ երբ շատ են լինում, իրար խանգարում են: Ամեն մարդ իր ցավն է առաջ քաշում, իր անձնական խնդիրը: Միայն իրենն է տեսնում: 50/ 50 է դառնում: Ավելի լավ է գլոբալ հարցեր առաջ քաշվեն և լուծվեն»: (**Արենի**)*

«Չէ, չունենք այնպիսի մի ձևաչափ, որպեսզի քննարկենք, բայց բյուջեն կազմելիս, բացի աշխատակազմի կամ ավագանիների հետ քննարկելուց, նեղ մասնագիտությունների հետ կապված հարց լինելիս, հանդիպում ենք մասնագետների հետ, որոնց կարծիքի հետ հաշվի ենք նստում, նրանց հետ խորհրդակցում ենք այս կամ այն հարցի շուրջ: Հաշվի ենք առնում նաև շահառուների կարծիքը: Օրինակ, եթե սոցիալական ինչ-որ ծարգիր կա ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ, մինչև մի շինարարի հետ չխոսես, չիմանաս, ինչի մասին է խոսքը,

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

չես կարող ճիշտ նկարագրություն տալ կամ նախահաշիվ կազմել:Այդպես ավելի իրական է, քան կաբինետում նստած՝ առանց նրանց հետ խորհրդակցելու»:
"Հեռու չենք մենք բնակչությունից, գյուղական համայնքների խնդիրների շուրջ հանդիպումներ են լինում բնակիչների հետ, ավագանիները՝ նույնպես: Բնակիչները ակտիվ չեն, չնայած նոր են իմացել, որ ազատ են ավագանու նիստերը, սակայն էլի չեն գալիս":
*"Համայնքում բավականին լավ ավագանու անդամներ են ընտրվել, նրանք կապ են պահում մարդկանց հետ, ի վերջո պետք է հասկանան, որ իրենք միայն քվեարակողներ չեն": (**Գլաձոր**)*

*«Հայտարարություն ենք տալիս, որ հանրային քննարկում է լինելու և ովքեր որ ցանկանում են, թող ներկա լինեն: Հայտարարությունները տարածում ենք Kapan.am կայքէջում և սոցցանցերի միջոցով: Մարդիկ գալիս են, ակտիվ մասնակցում են և մեր այդ խոշոր կազմակերպության ներկայացուցիչներն են գալիս, և ՀԿ ներկայացուցիչներ, հասարակ մարդիկ էլ են գալիս, բնակիչներ էլ են գալիս: Բայց ամեն դեպքում ես մի բան կարող եմ ասել, որ այսօրվա դրությամբ համայնքային բյուջեները սոցիալական ուղվածություն ունեն: Այսինքն՝ հիմնականում ապահովում ա աշխատավարձ»: (**Կապան**)*

*«Համայնքայի քննարկումներ երկու դեպքում էլ արվել են»: (**Մեղրի**)*

«Համայնքների խնդիրներն ավելի շատ ակնառու դարձան հանրային քննարուկմների ժամանակ, ներկայացվեցին թույլ և ուժեղ կողմերը: Հենց այդ քննարկումներից ավագանու շատ անդամների համար շատ բան հայտնի դարձավ: Ասենք, շատ դժվար էր հասկանալ, թե, օրինակ, Բարձրավան համայնքում ինչ խնդիրներ կան: Դե պարզ դարձավ: Հանրային լսումը տեղի ա ունենում քաղաքապետարանում, ու բոլոր բնակավայրերից գալիս են: Ու ամբողջ բնակչությանը տեղեկացվում ա: Ասեմ, որ հիմնական ակտիվիստները գալիս ու ներկայացնում են իրենց խնդիրները: Ավագանու համար շատ կարևոր են այդ քննարկումները, ինքն իմանում ա, ինչով են առաջնային բարձրացված խնդիրները: Ինչ վերաբերում է ավագանու նիստին, ասեմ, որ նախագիծը պատրաստի տալիս են: Համենայն դեպս, ավագանու խնդիրը առաջնայնության առանձնացումն ա, որը որ, ինձ թվում ա, համայնքապետարանի օգնությամբ, ստացվում ա":
*"Մենք արդեն ունենք էդ փորձը հանրային քննարկումներ անցկացնելու: Մեր ժողովրդին հրավիրում ենք: Իհարկե, մեծամասնությունը խուսափում ա, չի գալիս: Երևի, անգամ չի էլ պատկերացնում՝ էդ ինչ ա: Կարամ սենց իրանց ասեմ էլի՝ եթե մենք էսօր հոսանք չունենք, ուրեմն փող չունենք: Մեր ավագանիները էլի ժամանակին ակտիվ էին, կանայք էին, տղամարդիկ էլ կային: Ասենք, իրենք իրենց ուղղությամբ էին տանում, կանայք՝ իրենց: Իսկ բնաչությունը հիմա ինձ մոտ է գալիս, օպերատորի մոտ է մտնում, թե էս հարցը ոնց պիտի լուծվի, ինչ պիտի անենք, դեռևս չկա էնպիսի մարդ, որ ես իրեն ասեմ՝ գնացեք համայնքապետարան, որ էդ հարցը լուծեն: Կա խնդիր, ես եմ գալիս, բարձրաձայնում»: (**Միսիան**)*

«Չէ: Հանրային լսումներ հհիմնականում, եթե շինարարության հետ մենք կապ ունենք, կոնկրետ համայնքապետարանը, անպայման, հանրային ժողով չեմ ասի, բայց հանրային քննարկուներ

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

լինում ա, էլի: Մի խոսքով, կովերը տանել- բերելուց տենց հավաքներ էլի, զրույցներ, մենք էլ էլի: Օրինակ ծրագրեր ունենք, որոնց անպայման գյուղի բնակիչը ներկա ա լինում, թե ինչ պիտի անի, ինչ պիտի չանի: Դե, հիմնականում, գալիս են, խմբերով քննարկում են: Մի քանի օր առաջ ԳՈՒՄ-ի և Լիդիան Արմենիայի, մեկը որն էր, երեք կազմակերպություն, և մեկ էլ մենք էինք էլի՝ համայնքապետարանը: Երիտասարդ մայրերը բոլորն էլ ներկա են լինում: Մի 13 հոգի ներկա են լինում”:

*“Կոնկրետ հանրային լսում բյուջեի հետ կապված էդպես չի լինում, բայց ավագանու նիստին, եթե հարցը վերաբերում ա բյուջեին, բավականին շատ հետաքրքրվողներ ու մասնակիցներ ենք ունենում: Երբեմն-երբեմն նաև ընդունվում ա բնակչի առաջարկը: Եվ հարակից համայնքերից են մասնակցում, և մեր համայնքից; Բացի դա էլ սոցիալական ծրագրեր շատ-շատ ա իրականացվում Գորայք համայնքում: Լինում են դեպքեր, երբ որ պետք է համայնքը ինքը ներդրում ունենա, դրա համար հետաքրքրվածները իրենք տեղյակ են: Վերջին հանդիպման ընթացքում համայնքի ղեկավարը մանրամասն ներկայացրեց ընդհանուր բյուջեն . ինչ ա ծախսվել, ինչ ունենք, ինչքան ա ծախսվել և այլն: Կարծում եմ, որ բնակչության 70 տոկոսն իրազեկված ա: Կոնկրետ ես չեմ մասնակցել: Մեր հարևանը մասնակցել էր, ինքն ասաց՝ մեզ թվում էր, թե բյուջեն սովորական բան ա, ով ինչքան ուզի, ինչ ուզի՝ կարա վերցնի, բայց որ Առուստամյանը մանրամասը ներկայացրեց , որ էսքան բյուջե, հսկայական բյուջե ունենք մեր բնակչության հետ համեմատած, ինչքանը ոնց ենք բաշխել: Որ համայնքում, որ բնակավայրում ինչ ենք կատարել, մեր համար, իրոք, արդեն թափանցիկ դարձավ, ու էդքան հսկայական գումարը ոնց ա բաշխվել մի 12 մասի, ու ինքը իրոք նպատակին ծառայել ա»: (**Գորհայք**)*

Բնակչության հետ ֆոկուս խմբային քննարկումներից՝

«Հնարավոր ա, որ մենք տեղյակ չենք: Բյուջեի հետ կապված որոշակի ինֆորմացիաներ հաճախակի տրվում ա, Բերդում կան տախտակներ՝ ապակով սարքած, որ էդ ամբողջ հաշվետվությունը ներկայացվում ա ժամանակ առ ժամանակ»:
«Նաև կայք կա Բերդի համայնքապետարանի համար, որտեղ լինում ա էլի»:
«Ուղղակի, երևի յուրաքանչյուրս մեր աշխատանքով ենք զբաղված, հետաքրքիր չի էլի մեզ»:
«Մեր զբաղվածության չափը էնքան շատ ա, մենք չենք հասցնում նման հարցերին անդրադառնանք»:
*«Եթե ուզենանք, ցանկություն ունենանք տեղյակ լինել, անպայման կարանք տեղեկություն ստանանք, եթե մենք, ասենք, հետաքրքրվում ենք կայքով»: (**Բերդ**)*

*«Համայնքում անցկացվում են SMS ուսումնասիրություններ: Այլ քննարկումների չենք մասնակցում»: (**Արենի**)*

«Այստեղ նստածներից ոչ մեկը չի գա, մինչև իրենց չզանգես ու ասես, որ այս ժամին ներկա կլինես: Ես իմ աշխատանքային փորձից եմ ասում: Ոչ ոք չի ցանկանում մասնակցել, մարդիկ ժամանակ չունեն»:
«Ես մասնակցել եմ, եթե հարցը վերաբերել է մանկապարտեզներին»:
«Հնարավոր է այսպես, ըստ բնագավառների»:

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

«Ցանկություն չի եղել»:
«Հասարակության գիտակցությունը այնքան բարձր չի եղել, որ հասկանա, որ ինքն իրավունք ունի համայքում հարցեր լուծելու, փոխելու: Մարդիկ մտածել են, որ իրավունք չունեն, միևնույնն է իրենց խոսքը, ասելիքը տեղ չի հասնելու: Հեղափոխությունը դրանով է մարդկանց մոտ փոփոխություն մտցրել, ոչ թե ղեկավար մարմինների մոտ: Հեղափոխությունը փոխել է մարդկանց, նրանք արդեն գիտեն, որ իրենց ձայնը հասանելի է լինելու»:
«Մի բան էլ կա: Բոլորը չէ, որ սոցցանցերում են, կան ավանդական ընտանիքներ, որոնք հարսներին չեն թողնում օգտվել դրանցից: Մեր մանկապարտեզի հայտարարությունները շատ ծնողներ չեն կարդում, որովհետև իրենք չկան սոցցանցերում: Կան նաև նման բաներ»:
*«Երբ առաջին անգամ Գետափ բնակավայրում հանրային լսման մասին խոսք գնաց, բոլորը զարմացել էին, թե դա ինչ է, այսինքն՝ եկեղեցի են կառուցում, ժողովրդի կարծիքը հաշվի առնվում: Ժողովուրդն ով է, որ որոշի, թե եկեղեցին որտեղ պիտի կառուցեն: Մեր թաղամասում չի եղել այդ մասին հայտարարություն: Երբ ես ՖԲ-յան էջից տեղեկացա, խնդրեցի և իմ հայրիկը մասնակցեց այդ հանրային լսմանը: Արդեն թույլ են տվել ժողովրդին իր կամքը արտահայտելու, որոշակի կարգով հաշվի է առնվում ժողովրդի կարծիքը: Չեմ ուզում ամեն ինչ կապել հեղափոխության հետ, բայց այն օգնեց, որ մարդիկ հասկանան: Այո, բոլորը չունեն հնարավորություն ցանցերից օգտվելու: Եթե ես չասեի, իմ հայրիկը որտեղից իմանար հանրային լսման մասին»: (**Գլաձոր**)*

«Կազմակերպվում են համայնքային քննարկումներ»:
«Հանրային քննարկումներ լինում են, բայց բնակչությունը ակտիվ չի: Մարդիկ համոզված են, որ իրանց կարծիքը միևնույնն է հաշվի չեն առնի»:
*«Ագարակցիները ավելի քիչ են մասնակցում քննարկումներին, որովհետև վստահում են համայքապետին»: (**Մեղրի**)*

«Մինչ ավագանուն ներկայացնելը, համայնքային քննարկում է իրականցվում»:
«Իրականացվում է, մենք մասնակցել ենք, ինչպես նաև առաջարկություններ ենք ներկայացրել, որը հաստատել է ավագանին»:
«Ես մասնակցել եմ, բավականին փոշմանեցի»:
«Մի անգամ ես էլ եմ մասնակցել, էլ չեմ մասնակցել: Քննարկում էր, ծախսային մասով նյութը ներկայացված չէր: Եթե հասարակական լսումներ ա և պիտի առաջարկություններ ներկայացնես, եթե ծախսային մասը ներկայացված չի նախապես այդ փաստաթուղթում, ես ինչի հիման վրա առաջարկություններ ներկայացնեմ: Կարող ա երկու երեք րոպեի ընթացքում երկու երեք էջանոց բանը կարդալ ու...»:
«Տխուր երևույթ է սկզբից, երբ խոսքը կոնցեպցիայի մասին է: Ես ինչքան փորձել եմ մասնակցել այդ պրոցեսներին, առաջին հարցը մտածել եմ, որ ընդհանրապես ոչ մի կոնցեպցիա չկա՝ ինչ ես ուզում անել, ինչ- որ փոքր մեխանիկական, տեխնիկական պրոցեսներ ա, քցել բռնել երկու կոպեկ այս կողմ, երկուսը այն կողմ: Հետո, չկա ոչ մի հատ որակական հիմնավորում: Այսինքն, օրինակի համար, այս ինչ գումարը հատկացված ա աղբահանությանը, ինչի: Չգիտեմ, միգուցե Հայաստանում մեկ տոննա աղբի համար միջինը պետք է լինի այսքան, կամ ինչ- որ գումար,

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

որոշակի լոգիկա պետք է լինի: Կամ մեկ քառակուսի մետր մանկապարտեզը ջեռուցելու համար պետք ա այսքան էներգիա, այսինքն՝ հիմնավորումները չկան: Հիմնավորում չլինելը ինձ համար վատ բան ա, բայց փոքր չարիք ա, իսկ այն, որ չկա կոնցեպցիա, չենք հասկանում սա ինչ տնտեսվարման բյուջե ա, զարգացման բյուջե ա, թե չես հասկանում ինչ ա: Բյուջեն դա ինչ-որ մեխանիզմ է քո նպատակներին հասնելու համար, իսկ այստեղ թվում ա՝ կյանքը առանձին ա, իսկ բյուջեն պրոցես ա էլի, իրա համար գնում ա»:
«Այսքան գումար հավաքել ենք , այսքանը պիտի ծախսենք, բայց թե գլոբալ ինչ խնդիրներ ենք լուծում համայքի հետ կապված, դեպի ուր ենք զարգանում , դեպի ուր ենք գնում, քաղաքը ձախ ա գնում, աջ ա գնում, կենտրոնում ա մնում, ընդհանրապես էս կոնցեպցիան չկա»:
«Իմ կարծիքով, Արմենի ասածը մեկ նախադասությամբ կարել է ասած՝ կոռուպցիոն ռիսկերով լի է բյուջեն, համայնքներում սովորաբար, որովհետև, եթե կոնցեպցիա լինի, դժվար կլինի հրաժարվել, ասենք, հիմնավորել այն ծախսերը, որոնք իրենք են անում»:
*«Հանրային լսումներին չենք մասնակցել, բայց գիտենք, որ հանրային լսումները պաշտոնական կայքում տեղադրվում է, ով ցանկանում է կարող ա մասնակցել»: (**Կապան**)*

«Քննարկումները լինում են, ուղիղ եթեր լինում ա ավագանու քննարկումներից, բայց չենք հետևում, ժամանակ չկա, տուն, երեխեք»:
*«Տղամարդիկ ավելի շատ են հետաքրքրվում»: (**Շինուհայր**)*

*«Ես որպես քաղաքացի ասեմ: Մենք հանրային լսումների պարտադիր մասնակցում ենք: Մենք, որպես շահերի պաշտպանության խումբ, նախապես ծրագիր էինք մշակել, փոփոխությունների փաթեթ, որը որ ուղղված էր երիտասարդության քաղաքականության մշակմանը կոնկրետ Սյունիքի մարզում: Ներկայացրել ենք փաթեթը ու, ի ուրախություն մեզ, արդեն երբ որ բյուջեի նախագիծը քննարկվում էր հանրային լսումների ժամանակ, մենք տեսանք էդ փոփոխություններն արդեն մտցված, որոնք մենք առաջարկել էինք: Ու մենք հաճախակի փորձում ենք: Ոչ թե բողոքում ենք՝ ինչու է այսպես, այնպես, այլ նախապես ներակայցնում ենք ու ստացվում է»: (**Միսիան**)*

*«Չենք իմացել, չենք մասնակցել»: (**Գորիայք**)*

Համայնքապետարանի աշխատակիցների կարծիքով, տեղական բյուջեն, առաջին հերթին, պետք է ուղղված լինի հետևյալ հրատապ խնդիրների լուծմանը.

- ճանապարհների նորոգում
- ոռոգման ցանցի նորոգում
- խմելու ջրի որակի բարելավում և դրա հասանելիության ապահովում
- կոյուղագծերի անցկացում կամ եղածների նորոգում
- տրանսպորտ ունենալու կամ եղածի կանոնավոր շահագործման ապահովում
- աղբատար մեքենաների ձեռքբերում

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

- գյուղտեխնիկայի ձեռքբերում
- տանիքների և բնակֆոնդի վերանորոգում
- լուսավորության անցկացում և/կամ ցանցի ընդլայնում
- զբաղվածության ապահովում
- բնապահպանական մասնահանումների ճիշտ օգտագործում
- գազամատակարարման ապահովում
- մանկապարտեզների շենքի նորոգում կամ նոր մանկապարտեզների կառուցում
- բնակարանաշինություն՝ երիտասարդ ընտանիքների համար:

Ֆոկուս խմբային քննարկումներից՝

«Ճանապարհները, կոյուղագծեր, ոռոգման ներքին ցանց, ոռոգման ջուր: Համարյա բոլոր բնակավայրերում նույնն է՝ խմելու ջուր, ոռոգման ջուր:
Կան բնակավայրեր, որոնք շաբաթ-կիրակի չունեն տրանսպորտ:
ՀՏՀ հիմնդրամի միջոցով պիտի տրամադրեն տեխնիկա: Մենք կազմել ենք ծրագրեր՝ տրակտորներ են, մասնավորն էլ ունի: Կան խնդիրներ հին տեխնիկայի, ուզում ենք ունենալ նաև միկրոավտոբուսներ, որպեսզի մեր երեխաների մշակութային խմբերը կարողանան գնալ համերգների: Եթե ավտոբուս ունենանք, մեր մշակութային խմբերի տեղաշարժը հեշտ կլինի:
Աղբատար մեքենայի խնդիր ունենք, գյուղտեխնիկայի խնդիր ունենք: Դրանք բոլորը ներկայացրել ենք ծրագրում, բայց դեռ սպասում ենք արդյունքներին:
*Լուսավորության խնդիր կա, միայն Արփին է մնացել, բայց այն ընթացքի մեջ է: Գլխավոր ճանապարհները լուսավորված են: Սոցիալական այլ հարցեր կան, այս խնդիրը առաջնային չէ”: (**Արենի**)*

*“Առաջնային խնդիրը մարդկանց զբաղվածությունն է”: (**Գլաձոր**)*

“Մեր ճանապարհներն ա, ենթակառույցների այսօր, իրոք, վատ վիճակ ա: Հենց տանիքներն ա, բնակֆոնդի վերանորոգում: Ճիշտ է, բնակֆոնդը համատիրությանն է, մեր բնակֆոնդը պատերազմից հետո, որ նայում եք, շենքերի պատուհաններին թղթեր է կպցված, եսիմ փայտեր ա կպցված, դռներ չունեն, որ կարելի է դռներ դնել, ներսը գոնե մի քիչ կարգավորել, կարելի է, համայնքում այնքան խնդիրներ կան”:
“Լուսավորության խնդիր ունեն համարյա բոլոր գյուղերը”:
“Այսօր, որ գնացել ենք գյուղական ճանապարհները, ճանապարհ չկա, հասնում ես այնտեղ, մեկ- երկու լույս է վառվում”:
“Տրանսպորտ կա ոչ բոլոր բնակավայրերում, ներհամայնքային կա Կապան քաղաքում, շատ լավ գործում է: Ծրագիր ենք ներկայացրել, դեռ պատասխան չունենք, ուղղակի ասել են, երևի թե 19 թվականին կլնի, մենք ներկայացրել ենք կոմունալ տեխնիկա ձեռք բերելու համար և որպեսզի այդ աղբահանությունը իրականացվի նաև գյուղերում, գյուղերի համար աղբամաններ և մեքենաներ”:
“Միայն երկու գյուղում է մասամբ իրականցվում՝ Սյունիքում և Արծվանիքում: Մյուս 35

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

*բնակավայրում աղբահանություն չի իրականացվում, ամեն մեկը մոտ ձորակն է նետում աղբը: Ու նաև խնդիր է մեր բնապահպանական մասհանումները, որ մենք չենք հասկանում, ոնց ա կատարվում այդ մասհանումը, եթե տարի ենք ունեցել, որ Կապան համայնքը ստացել է 6 300 000 դրամ: Եկող տարի 16 միլիոն է, այս տարի 12-ն է: 16 միլիոնը այդ 38 բնակավայրի հաշվարկով, այսինքն՝ այնտեղ Գեղանուշն էլ է տուժում՝ պոչամբար ունի, Արծվանիքն էլ այդ համայնքն է: 16 միլիոն է, ինչը համաձայն եք՝ շատ փոքր գումար է, բնապահպանական վճարների մասհանում որպես: Իրենք հաշվարկում են, իրենք տալիս են, հաշվարկում են, զանգում են, հեռախոսով մի գումար են ասում, ասում են ծրագիրը այդպես կազմեք": (**Կապան**)*

"Համայնքի հիմնական խնդիրներից է գազամատակարարման հարցը":
"Գազամատակարարում չկա, վառելափայտի հարցը խիստ է դրված, ձմեռը ջեռուցման խնդիր կլինի: Էլեկտրաէներգիայով ջեռուցումն էլ լրացուցիչ խնդիրներ է առաջացնում, նոր ենթակայաններ չկան, հաճախակի անջատումներ են լինում":
"Մեղրիի մանկապարտեզի շենքի վերանորոգում":
"Ագարակի և գյուղերի փողոցների ասֆալտապատում":
*"Գիտեմ, որ բնակարանային հարցը տեղական բյուջեի լուծման հարց չի, բայց շատ հրատապ խնդիր է: Երիտասարդ ընտանիքները չեն կարողանում լուծել այդ խնդիրը: Բնակ շինարարություն վերջին 30 տարիներին չի իրականացվել": (**Մեղրի**)*

*"Ասենք՝ 90 տոկոսը խմելու ջուրը, ոռոգման ջուր: Ցանցը շատ հին ա, սովետից մնացած: Տրանսպորտի հարցը": (**Միսիան**)*

Սակայն բնակչության կարծիքը միշտ չէ, որ համընկնում է համայնքապետարանի կարծիքի հետ: Այսպես, բնակչությունն, առաջին հերթին, կարևորում է.

- մանկապարտեզների առկայությունը
- դպրոցների շենքային պայմանների բարելավումը
- խաղահրապարակների և լողավազանի առկայությունը
- մշակույթի տան վերանորոգումը
- ժամանցային վայրերի առկայությունը
- տարատեսակ խմբակների առկայությունը
- աշխատատեղերի բացումը, հատկապես՝ կանանց համար
- գյուղմթերքի իրացման խնդիրների լուծումը
- գրադարանների վերանորոգումն ու վերաբացումը
- սոցիալական ձեռնարկությունների առկայությունը
- գազամատակարարման հարցի լուծումը
- մայթերի առկայությունը
- բնակավայրերի բարեկարգումն ու դրանց գեղեցկացումը
- բակերի բարեկարգումը
- խմելու և ոռոգման ջրի հարցերի կարգավորումը, դրանց կանոնավոր մատակարարումը

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

- ճանապարհների ասֆալտապատումը
- տրանսպորտի կանոնավոր աշխատանքը
- հյուրատների և սննդի սպասարկման կետերի առկայությունը
- սոցիալական աջակցության համար գումարների հատկացումը
- համայնքում եկեղեցի ունենալը
- ՀԿ-ների հետ համագործակցությունը
- բոլոր բնակավայրերում դեղատների առկայությունը:

Բնակչության հետ ֆոկուս խմբային քննարկումներից՝

«Մանկապարտեզը»:
«Առավել կարևորը կամրջի վերականգնումն է, ամրացումը՝ այն տանում է դեպի մոտակա սահմանի մեր դիրքերը»:
*«Դպրոցը շատ հին է, վթարային, պետք է այս խնդիրն էլ լուծել: Ներսը չի բավարարում, ոչ մակերեսը, ոչ սանհանգույցը, երեխաները շատանում են, տարածքը փոքր է: ՀՀ կառավարությունը որոշում ունի մինչև 2023 թ. նոր դպրոցներ կառուցել, հուսանք, որ մեր դպրոցը կմտնի այդ պլանի մեջ: Մի դասարանում կա 23 երեխա, չեն տեղավորվում»: (**Արենի**)*

«Մանկապարտեզը, որը չունի խաղահրապարակ»:
«Մշակույթի տունը, որը շատ հին է»:
«Ժամանցի վայրերի ստեղծում: Բոլորն իջնում են Եղեգնաձոր»:
«Լինի մի արտադրամաս, որ գոնե մի 50 աշխատատեղ բացվի»:
«Աշխատատեղեր չկան, ապրանքը իրացնելու խնդիր կա»:
«Մշակույթի պալատն ունի տարածքներ, լավ կլինի այնտեղ հիմնվի արտադրամաս, իսկ գյուղից այն մարդիկ, ովքեր Ռուսաստանում ունեն որոշակի ֆինանսական կարողություն, ներդրումներ կանեն և կօգնեն աշխատեցնել մի արտադրամաս: Նաև մշակույթի պալատը աշխատեցնել, խմբակներ ստեղծել, մեր երեխաները դժվար են գնում Եղեգնաձոր, թող մեզ մոտ լինեն մշակութային խմբեր»:
«Մեր շնորհալի կանանց ուժերը կարող են օգտագործել»:
«Մենք ունենք հարուստ գրադարան, բայց այն չի աշխատում: Թող մեր համայնքի բնակիչները գնան մեր գրադարանները»:
«Յանկալի է, որ կազմակերպվեն տարբեր զեկուցումներ, միջոցառումներ, գրքի քննարկումներ»:
*(**Գլաձոր**)*

«Ես ամենաշատը կուզեի սոցիալական ձեռնարկատիրության վրա, այսինքն ես մարդկանց կասեի՝ եկեք նախաձեռնություններով, որոնք կայուն են և լուծում են սոցիալական խնդիր, համայնքը մասնակցում ա համաֆինանսավորմամբ: Այդ տեսակետից և աշխատատեղերի խնդիր կլուծենք և ամեն մի սոցիալական ձեռնարկություն կարող է մի հատ սոցիալական խնդիր լուծի: Մի տեղ, ասենք, կանանց զբաղվածություն, մանկապարտեզի հարց լուծվի,

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

*միգուցե հաշմանդամների հարցը լուծվի, բայց ինձ թվում է, որ սոցիալական հարցերը պետք է լուծվեն ոչ թե պարզապես մարդկանց նստեցնելով նպաստների վրա, այլ նախաձեռնությամբ: Մարդիկ պետք է իրենք մասնակցեն իրենց բախտի լավացմանը, իրենք պետք է ակտիվանան»: (**Կապան**)*

«Մեղրիի մանկապարտեզի վերանորոգման հարցը խիստ հրատապ է»:
«Բնակիչներին գազամատակարարման հարցը»:
*«Մեղրի քաղաքի մայթեր չունենալը ճիշտ է խնդիր է, բայց բոլորն էլ հասկանում են, որ դա լուծելը շատ դժվար է, քանի որ տների դասավորությունը, ռելիեֆը, ճանապարհների նեղությունը թույլ չեն տալիս»: (**Մեղրի**)*

*«Խմելու և ոռոգման ջրի հարցը շատ հրատապ է»: (**Շինուհայր**)*

«Քաղաքի գեղեցկությունն ա կարևոր: Ավելի մաքուր, բարեկարգ»:
«Բակ չկա երեխաքի համար: Ավազի ու հողերի վրա են խաղում»:
«Գոնե կահավորեն խաղահրապարակներ, չկա լողավազան»:
«Սպասարկան օբյեկտեր չկան: Մի տեղ չկա, որ հյուրիդ տանես: Մաքուր, նորմալ: Տուրիզմը դրա համար Սիսիանում չի զարգանում, չկան շնորքին հյուրանոցներ, հյուրատներ»:
Սոցիալական ոլորտում էլ շատ լավ կլինի, որ ինչ-որ խնդիրներ լուծվեն: Որ ծայրահեղ աստիճանի չհասցնեն, դանակը ոսկորին չհասնի: Նախապես գումար լինի առանձնացված: Ոչ թե փոխեն բյուջեն, տողերը»:
«Շատ կարևոր է ՀԿ-ների հետ համագործակցությունը: Ունենա բյուջե, օրինակ, երբ ՀԿ-ն ծրագիր է իրականացնում, իրենք էլ համաֆինանսավորող դառնա»:
«Մի ձեռնարկություն ստեղծեն, աշխատանք տան, թեկուզ փոքր քանակով»:
*«Տրանսպորտի հարցն էլ չի լուծվում, ժամերով կանգնում ենք: Հարցը բազմիցս բարձրացրել ենք, բայց Բռնակոթցիների նման շոֆերի գլուխը որ կոտրեինք՝ կկարգավորվեր: Իրենք էդպես են արել ու նորմալ աշխատում ա: Խոսքը Սիսիանի միջի տրասպորտի մասին է»: (**Սիսիան**)*

«Ուրեմն, ակտիվ խումբ ենք կազմել, բիզնես ներկայացուցիչներ՝ 12 հոգուց բաղկացած: Հիմա Լիդիանն ու գյուղապետարանը միասին 50/50 նախաձեռնություն են անում, 2 կարևոր նախաձեռնություն են որոշել, որ պիտի համայնքում անեն՝ 3 000 դոլար արժողությամբ, դրանցից մեկը որոշել ենք, որ խաղահրապարակ-այգի պիտի սարքենք ու մյուսն էլ մուտքը գեղեցկացնենք: Էդ երկու ծրագիրը պիտի անենք, նոյեմբերին վերջացնենք»:
«Եկեղեցի չունենք»:
«Ծնողներն ուզում են մանկապարտեզ: Դեղատուն էլ չունենք»:
«Դե ասֆալտը»:
*«Օրինակ, իմ համար, մենակ իմ համար էլի չէ, երիտասարդների համար ժամանցի վայր լիներ: Հունիսից գալիս ենք արձակուրդ, օրը 24 ժամ տանը նստած ենք լինում»: (**Գորիայք**)*

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

Ինչը մեկ անգամ ևս փաստում է հայանքապետարան-բնակչություն երկխոսության և փոխադարձ կապի անհրաժեշտության մասին, ինչը հնարավորություն կընձեռի համայնքային բյուջեի գումարներն առավել նպատակային և արդյունավետ ծախսելու՝ հաշվի առնելով բոլոր խավերի, հատկապես խոցելի, կարիքներն ու պահանջմունքները:

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:
«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում համապատասխան վերլուծությունների և/կամ հետազոտությունների իրականացումը, որոնք թույլ կտան վերհանել համայնքի բնակիչների, հատկապես՝ խոցելի խմբերի, իրական կարիքները, պետք է վերապահել համայնքի սոցիալական աշխատողին: Եվ, որպեսզի համայնքի սոցիալական աշխատողը այդ գործառույթը կարողանա լիարժեք կատարել, անհրաժեշտ է.

1.1 «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը. «Սույն հոդվածի 1-ին մասում նշված լիազորությունների իրականացման համար **յուրաքանչյուր 5000 բնակչի հաշվարկով համայնքի աշխատակազմում ստեղծվում է համայնքի սոցիալական աշխատողի առնվազն 1-ական հաստիք**...»:

1.2 «Սոցիալական աջակցության» ՀՀ օրենքի 37-րդ թոդվածի 2-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը. «Տեղական սոցիալական ծրագրերը մշակվում են համայնքի ղեկավարի կողմից, լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի սոցիալական դեպք վարողի մասնագիտական աջակցությամբ՝ գործընթացին **պարտադիր մասնակից դարձնելով, համայնքի սոցիալական աշխատողին**, ինչպես նաև մասնակից դարձնելով համայնքի տարածքում գործող աջակցող ցանցի մասնակիցներին և համայնքի բնակչության ներկայացուցիչներին»:

1.3 Համապատասխան փոփոխություններ մտցնել նաև համայնքի սոցիալական աշխատողի պաշտոնի անձնագրում:

2. Բնակչության խոցելի խմբերի ներկայացուցիչների վրա համայնքում իրականացվող ծրագրերի ազդեցության/արդյունավետության գնահատումն ապահովելու համար՝ անհրաժեշտ է մշակել և գործարկել համապատասխան ցուցիչներ պարունակող էլեկտրոնային հավելված:

3. Համայնքների (համայնքապետարանների) համար պետք է մշակել և կիրառկել գենդերային վերլուծության ուղեցույց՝ ապահովելու 5-ամյա զարգացման ծրագրերում (և, առհասարակ, յուրաքանչյուր իրականացվող ծրագրում) գենդերային բաղադրիչի պարտադիր ներառումը:

4. Անհրաժեշտ է նախատեսել սուբվենցիաների քվոտավորում՝ պարտադրել դրանց **առնվազն 10%-ն ուղղորդել խոցելի խմբերից որևէ մեկի կարիքների բավարարմանը**:

5. Որպեսզի հնարավոր լինի ներգրավվել փորձագետներին, ՀԿ-ների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներին համայնքային բյուջեի և զարգացման ծրագրերի մշակման ու դրանց ընդունման գործընթացներում, անհրաժեշտ է.

5.1 Նախ, ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրումը ամրագրել օրենքով, այլ ոչ թե Կառավարության որոշումով:

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններթ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններթ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

5.2 Երկրորդը, վերանայել ՀՀ պետական բյուջեից համայնքներին տրամադրվող սուբվենցիաների ծրագրային հայտերի քննարկման կարգը՝ **հայտերը քննարկման համար պետք է ներկայացվեն ոչ թե մարզպետարան (կամայական որոշումներից զերծ մնալու համար), այլ անկախ փորձագիտական խմբին**, որն էլ հայտերը քննարկելուց և ամփոփելուց հետո՝ դրանք կներկայացնի համապատասխան ոլորտային պետական կառավարման մարմիններ և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն՝ վերջնական որոշում կայացնելու համար: Քանզի ներկայիս գործող կարգը հակասում է Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի 9-րդ թոդվածի դրույթներին:

«Բյուջե բոլորի համար» ծրագիրն իրականացվում է «Վիններ Հայաստան» կոալիցիայի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Վիններ Հայաստան» կոալիցիան և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները: